ՉԳՐԱՆՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՐԱՑՈՒՄԸ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՔՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՕԼԳԱ ԱԶԱՏՅԱՆ

Հետազոտությունը կատարվել է Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի աջակցությամբ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Նպատակ, խնդիրներ, մեթոդաբանություն 4
3. Չգրանցված աշխատանք, սահմանումներ, վիճակագրություն 7
4. Չգրանցված աշխատանքի հիմնական ոլորտները 9
5. Չգրանցված աշխատողների կարիքներն ու խնդիրները 11
6. Չգրանցված աշխատանքի ոլորտում պետական ներկայիս քաղաքականության հիմնախնդիրների ու մարտահրավերների համառոտ ուրվագիծը 19
7. Չգրանցված աշխատողների ինքնակազմակերպման մարտահրավերն ու հնարավոր ազդեցությունը նրանց հիմնախնդիրների լուծման վրա 23
8. Չգրանցված աշխատողների հանդեպ պետական քաղաքականության անբավարարության հիմնախնդիրների բացասական հետևանքները Քովիդ-19-ի օրինակով 25
9. Քովիդ-19-ից տուժած ընտանիքներին օգնության ցուցաբերման՝ ՀԿ-ների և քաղաքացիական նախաձեռնությունների փորձը 28
10. Եզրակացություններ 31

1. Ներածություն

Ողջ աշխարհում[1] աշխատողների 61%-ը ու միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում աշխատողների 70%-ը աշխատում են ոչ ֆորմալ դաշտում:[2] Սա նշանակում է, որ նրանք զրկված են աշխատանքային և սոցիալական պաշտպանության ընթացակարգերից, որոնք ապահովում են կայուն եկամուտ, պաշտպանում տնային տնտեսություններին աղքատությունից և ռիսկերից: Քչերը կարող են առանց տնտեսական և սոցիալական իրավունքներից օգտվելու ակտիվորեն նպաստել ժողովրդավարական հասարակությունների կայացմանը: Եվ հակառակը՝ հնարավոր չէ կառուցել բաց և ժողովրդավարական հասարակություններ աշխատուժի հսկայական հատվածի անտեսանելի, չհասկացված և շահագործված աշխատանքի վրա: Սա համաշխարհային մարտահրավեր է:[3]

Պաշտոնական տվյալների համաձայն՝[4] 2018թ.-ի դրությամբ Հայաստանում պոտենցիալ աշխատուժը կազմում է բնակչության 68%-ը, որից տնտեսապես ակտիվ է բնակչության 57%-ը: Համաձայն ՊԵԿ-ի՝ 2019թ. դեկտեմբերին հարկման բազա (հարկման ենթակա եկամուտներ) ապահոված աշխատատեղերը կազմել են շուրջ 629 հազար, ինչը 2018թ. նույն ամսվա համեմատ ավել է շուրջ 7%-ով (41 հազարով), իսկ 2018թ. ապրիլի համեմատ՝ մոտ 16%-ով (88 հազարով): Սա համարվում է զբաղվածության ֆորմալ հատվածը: Ոչ ֆորմալ հատվածի տնտեսավարող արտադրական միավորների թիվը կազմում է 185.8 հազար, նրանցում զբաղվածությունը՝ 354.0 հազար մարդ (միջին հաշվով 1.9 մարդ): Տարբեր մեթոդաբանական հաշվարկներով՝ Հայաստանում չգրանցված աշխատողների թիվը տատանվում է 300 հազարից 700 հազարի միջև:[5]

---

[1]Roever, S., Alfers, L., Wanjiku, C., Rogan K. & M., with Agshar, C. and Mhalana, S., (2019) Workers' Rights in Informal Economies, .

[2] Ըստ ԱՄԿ առաջարկությունների, ոչ ֆորմալ հատվածը լայն իմաստով բնութագրվում է որպես տնտեսական գործունեություն իրականացնող միավորների համախումբ, որոնք զբաղված են ապրանքների և ծառայությունների արտադրությամբ՝ առավելապես դրանցում ընդգրկված անձանց աշխատանքով և եկամտով ապահովելու համար:

[3] Заработная плата в мире в 2016–2017 гг. Неравенство в оплате труда на предприятиях, http://www.ilo.int/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_544096.pdf.

[4] Աշխատանքային Շուկայի Հիմնական Ցուցանիշներ, ՀՀ վիճակագրական կոմիտե, Աշխատանքային ռեսուրսներ 2018, Երևան, https://armstat.am/file/article/trud_2019_05.pdf:

[5] ՀՀ վիճակագրական կոմիտե, Համաշխարհային Բանկ, Ասիական Զարգացման Բանկ:

Հայաստանում ստվերային տնտեսության մակարդակն ամենաբարձրներից մեկն է ԱՊՀ-ում:[6] Ինչպես արտացոլված է ԵԱԶԲ 2018թ. հունիսի մակրոամփոփագրում[7] վկայակոչված ԱՄՀ գնահատականում՝ Հայաստանում ստվերային շրջանառության բաժինը կազմում է ՀՆԱ 36%-ը: Այդ ցուցանիշը զիջում է միայն Տաջիկստանում ստվերի գնահատման տվյալներին՝ ՀՆԱ 37,8%-ը: Նշվում է, որ Ղազախստանում ստվերային շրջանառությունը կազմում է ՀՆԱ 32,8%-ը, Ղրղզստանում՝ ՀՆԱ 30,1%-ը, Բելառուսում՝ ՀՆԱ 32,4%-ը, Ռուսաստանում՝ ՀՆԱ 33,7%-ը:

Քովիդ-19 համավարակը Հայաստանում և այլ երկրներում հատկապես ծանր անդրադարձավ ոչ միայն պաշտոնապես գրանցված սոցիալապես անապահով խավերի կամ պաշտոնապես գրանցված աշխատողների որոշակի խմբերի վրա, այլև՝ մի շարք այլ խմբերի, որոնցում առանձնահատուկ տեղ ունեն չգրանցված աշխատողները: Վերջիններս շատ տարբեր են՝ սկսած ինքնազբաղվածներից, մինչև փոքր կամ միջին ձեռնարկություններում աշխատող, սակայն գործատուի կողմից պաշտոնապես չգրանցված աշխատակիցներ: Համավարակը սրեց ու մակերես բարձրացրեց այս խմբերի կարիքները, որոնք մինչ այդ անտեսված էին:

Քովիդ-19-ի առնչությամբ ՀՀ կառավարության միջոցառումները ևս չթիրախավորեցին չգրանցված աշխատողներին պետական աջակցություն տրամադրելու առումով: Կառավարության քաղաքականությունը նպատակաուղղված էր ոչ թե կարիքավորների սոցիալական աջակցությանը, այլ՝ ձեռներեցության օժանդակությանը, քանի որ օժանդակության համար որպես չափորոշիչ էր ծառայում աշխատավորների գրանցված լինելը, ոչ թե Քովիդ-19-ի հետևանքով կարիքի մեջ հայտնված անձանց ու ընտանիքների հայտնաբերումը և աջակցությունը:

Այս մարդկանց և նրանց կարիքների քարտեզագրման խնդիրը պարզապես չի կարևորվել և այդ պատճառով էլ չի իրականացվել, ինչի հետևանքով հնարավոր չէ նաև գնահատել ու ճշգրիտ նկարագրել նրանց զրկանքների աստիճանը և ռիսկերը համավարակի պայմաններում: Չկան նաև համավարակի զարգացման տարբեր հնարավոր սցենարների դեպքում այս խմբերի կարիքների սրման գնահատումներ և դրանց աջակցությանն ուղղված հնարավոր քաղաքականություններ:

2. Նպատակ, խնդիրներ, մեթոդաբանություն

[6] Medina, L., Schneider, F., Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, IMF, https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2018/01/25/Shadow-Economies-Around-the-World-What-Did-We-Learn-Over-the-Last-20-Years-45583.

[7] Մկրտչյան, Է.,«Հայաստանում ստվերային տնտեսության մակարդակն ամենաբարձրներից մեկն է ԱՊՀ-ում» վերգրությամբ հոդված, Արմինֆո լրատվական գործակալություն, 13 Հուլիսի 2018թ., https://finport.am/full_news.php?id=35237&lang=1:

Առաջարկվող հետազոտության նպատակն է չգրանցված աշխատողների կարիքների և խնդիրների բացահայտումն ու նկարագրումն ընդհարապես և, մասնավորապես, դրանց սրման վրա Քովիդ-19 համավարակի թողած ազդեցության ու հետևանքների հետազոտումը, ինչպես նաև դրանց մեղմմանը, իսկ հնարավորության դեպքում՝ արժանապատիվ բավարարմանն ուղղված առաջարկների վերհանումը:

Հիմնական խնդիրներն առաջանում են համավարակի առաջացրած իրավիճակում քաղաքականությունների մշակման ու իրականացման գործընթացներին ոլորտային փորձագետների, մասնագիտական շրջանակների, քաղաքացիական կազմակերպությունների և շահառու խմբերի ոչ բավարար մասնակցայնության հետևանքով: Նկատենք, որ մասնակցայնության կարևոր մեխանիզմներից մեկը քաղաքականություններն ուսումնասիրող անկախ հետազոտական ինստիտուտների և փորձագիտական խմբերի հետազոտություններն են՝ ուղղված խոցելի խմբերի և նրանց ներկայացուցիչների կարիքների բացահայտմանը և դրանց բավարարմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

Ներկայացվող հետազոտության խնդիրներն են պարզել, թե.

- ինչ մեխանիզմներ կարելի է կիրառել կարիքավոր և օժանդակության առաջնային անհրաժեշտություն ունեցող չգրանցված աշխատողներին հայտնաբերելու համար,
- որոնք են չգրանցված աշխատողների կարիքներն ու խնդիրները,
- որքանով են սրվել այդ կարիքներն ու խնդիրները համավարակի պայմաններում,
- ինչ կարգի օժանդակություն և աջակցություն է անհրաժեշտ ցուցաբերել Քովիդ-19-ի հետևանքով անապահով և խոցելի վիճակում հայտնված խմբերի կարիքներն ու խնդիրները թեթևացնելու համար,
- որքանո՞վ են կորոնավիրուսի հետևանքների չեզոքացման սոցիալական և տնտեսական ծրագրերը օգտակար եղել այդ կարիքների լուծման համար:

Մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է *որակական մեթոդներով.*

- գրավոր աղբյուրների հետազոտություն,
- փորձագիտական հարցազրույցներ,
- անհատական խորացված հարցազրույցներ:

Գրավոր աղբյուրների հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հիմնախնդրին վերաբերող պետական քաղաքականությունը, իրավական ակտերը, տարբեր տարիների ընթացքում իրականացված տեղական ու միջազգային հետազոտություններ:

Փորձագիտական 13 հարցազրույցներից 6-ը անցկացվել է ոչ ֆորմալ զբաղվածության հիմնախնդրին ծանոթ տնտեսագետների, սոցիոլոգների, իրավաբանների հետ և 7-ը՝ Քովիդ-19-ի սոցիալական հետևանքների հաղթահարման հետ կապված աշխատանքներ իրականացրած ՀԿ ներկայացուցիչների հետ:

Իրականացվել են 22 *անհատական խորացված հարցազրույցներ* ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում աշխատող կարիքավոր անձանց հետ:

Հետազոտությունը կատարվել է չորս փուլով:

Փուլ 1. *Փորձագիտական հարցազրույցներ մասնագետների հետ:* Փորձագիտական այս հարցազրույցների նպատակն է եղել հայտնաբերել չգրանցված աշխատողների այն խմբերը, որոնց միջավայրում խորացված անհատական հարցազրույցներն իրականացնելու միջոցով հնարավոր կլինի վերհանել տարբեր խմբերին բնորոշ կարիքների ու խնդիրների տարապատկերը: Կարևոր է համարվել նաև չգրանցված աշխատողների պաշտպանվածության խնդիրն ընդհանրապես և, մասնավորապես, այն, թե չգրանցված աշխատողներին վերաբերող ինչպիսի տիպային ու առանձնահատուկ խնդիրներ կան: Կարևոր է նաև պարզելը, թե նրանց խնդիրներից որոնք կարիք կա թիրախավորելու և խորապես ուսումնասիրելու անհատական խորացված հարցազրույցների միջոցով: Կարևոր է համարվել նաև այս հարցազրույցների միջոցով Քովիդ-19-ի շրջանակներում իրականացվող պետական միջոցառումների դրական կողմերի ու թերությունների վերհանումը, նաև այն, թե ինչ հարցադրումներ կարելի է բարձրացնել այս խնդրի ավելի խորը ուսումնասիրության համար, և չգրանցված աշխատողների կարիքների բավարարման ու ռիսկերի կանխարգելման համատեքստում ինչ առաջարկներ կան այդ միջոցառումները կատարելագործելուն ուղղված:

Փուլ 2. *Փորձագիտական հարցազրույցներ ոլորտային ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:* Փորձագիտական 7 հարցազրույցի իրականացում հասարակական այնպիսի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ,[8] որոնք փորձառություն են ձեռք բերել Քովիդ-19 համավարակի հետևանքով սոցիալապես տուժած ընտանիքների հետ աշխատելու հարցում: Խնդիր է դրվել պարզաբանելու, թե հատկապես որ սոցիալական խմբերի մոտ են սրվել սոցիալական բնույթի կարիքները, որ կարիքներն են հատկապես դրանք, ինչպիսի խնդիրներով են ամենից հաճախ մարդիկ դիմում իրենց, դրանցից որոնք են համարվում առավել առաջնայինն ու հրատապը, ինչ մեխանիզմների միջոցով են հայտնաբերվում ու նույնականացվում օժանդակության կարիք ունեցող մարդիկ, ինչպես են գնահատվում նրանց կարիքները և որքանով են Քովիդ-19-ի պետական միջոցառումներն օգտակար եղել այդ կարիքների լուծման համար:

Փուլ 3. *Անհատական խորացված հարցազրույցների նախապատրաստում և իրականացում*: Փորձագիտական հարցազրույցների հիման վրա ստեղծվել է հարցարանը, կազմվել է ընտրանքը և անցկացվել 22 խորքային հարցազրույց չգրանցված աշխատողների հետ: Ընտրանքում ներառվել են հետևյալ գործունեության ոլորտները՝ մաքրարարներ, տնային աշխատողներ, սեզոնային/արտագնա աշխատողներ, օրավարձով աշխատողներ, ինքնազբաղներ, խառը աշխատանքներ իրականացնող արհեստավորներ ու բանվորներ, ծառայությունների ոլորտի աշխատողներ/հյուրանոց, ռեստորան, սրճարան, ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված գյուղաբնակներ, արվեստի, սպորտի և այլ մասնավոր խմբակներում աշխատողներ: Տարիքային խմբերը բաժանվել են մինչև 35 տարեկան կին (6 մարդ) /տղամարդ (5 մարդ) և 36-ից բարձր կին (5 մարդ) /տղամարդ (7 մարդ): Հարցազրույցներն իրականացվել են Երևանում (10 մարդ), Գյումրիում (6 մարդ) և երևանամերձ փոքր համայնքներում (6 մարդ):

[8] Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ, Մանկական զարգացման հիմնադրամ, Փինք Հայաստան ՀԿ, Կանանց իրավունքների տուն, Մարդու իրավունքների եզդիական կենտրոն ՀԿ, Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ:

Փուլ 4. Վերլուծության փուլում հստակեցվել են չգրանցված այն աշխատողները, որոնք գտնվում են ռիսկային խմբերում և հիմնավորվել է դրանց ռիսկայնությունը: Ներկայացվել են այն որակական առաջնային ցուցիչները, որոնք կարող են օգտակար լինել այդ կարիքավորներին նույնականացնելու համար, նկարագրվել են այդ խմբերի կարիքները և խնդիրները, ինչպես նաև սահմանվել դրանց մեջ առաջնային և երկրորդային բնույթի խնդիրները, առաջարկվել են կարիքի վրա հիմնված քաղաքականության մշակման թիրախներ և ներկայացվել որոշ առաջարկներ:

3. Չգրանցված աշխատանք, սահմանումներ, վիճակագրություն

Ըստ ԱՄԿ առաջարկությունների՝[9] աշխատանքի շուկայում ոչ ֆորմալ հատվածը բնութագրվում է որպես տնտեսական գործունեություն իրականացնող միավորների համախումբ, որոնք զբաղված են ապրանքների և ծառայությունների արտադրությամբ՝ առավելապես դրանցում ընդգրկված անձանց աշխատանքով և եկամտով ապահովելու նպատակով: Այդ միավորների գործունեությունը հիմնականում իրականացվում է փոքր մասշտաբներով, վիճակագրորեն «ոչ տեսանելի» վայրերում՝ փոքր չափերի խանութներում, արտադրամասերում և տնային տնտեսություններում:

Այս հիմնախնդիրը Հայաստանում, ցավոք, չի ենթարկվում ամենամյա հետազոտության ու գնահատման, և դրա հետ կապված ունենք ընդամենն առանձին տարիներին արված հատվածային հետազոտություններ: ՀՀ վիճակագրական կոմիտեն առաջին և միակ անգամը ոչ ֆորմալ զբաղվածության ուսումնասիրություն է իրականացրել 2008 թվականին:[10] Այդ ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ աշխատաշուկայում հետազոտվող ժամանակաշրջանում հիմնական և երկրորդ գործունեության մեջ ստացվել է հետևյալ պատկերը.

1. ոչ ֆորմալ զբաղվածությունը (չգրանցված աշխատանք) կազմել է 51.8%,[11] որից ոչ գյուղատնտեսական ոլորտում՝ 29.1%,
2. ոչ ֆորմալ հատվածի (ստվեր) զբաղվածությունը՝35.3%, որտեղ ոչ գյուղատնտեսական ոլորտում՝ 19.2%,[12]

---

[9] Hussmanns, R. (2003). Statistical definition of informal employment: Guidelines endorsed by the Seventeenth International Conference of Labour Statisticians. Geneva: International Labour Office, https://ilo.org/public/english/bureau/stat/download/papers/def.pdf.

[10] «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում», Հայաստանի վիճակագրական կոմիտե, (2008), Երևան, https://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf:

[11] Հաշվարկված է ընդամենը զբաղվածների թվաքանակի (1007.8 հազ. մարդ) նկատմամբ:

[12] Հաշվարկված է ոչ գյուղատնտեսական ոլորտի զբաղվածների թվաքանակի (703.7 հազ. մարդ) նկատմամբ:

3. Տնային տնտեսությունների զբաղվածությունը կազմել է 19.6%, որտեղ ոչ գուղատնտեսական ոլորտում դեպքեր չեն արձանագրվել,
4. ոչ ֆորմալ հատվածից դուրս ոչ ֆորմալ զբաղվածությունը՝ 16.6%, որտեղ ոչ գյուղատնտեսական ոլորտում՝ 10%:

Զբաղվածների 35.1%-ը տնտեսական գործունեություն իրականացրել է բացառապես տնտեսության ոչ ֆորմալ հատվածում: Հետազոտությունը ցույց է տվել, որ ոչ ֆորմալ զբաղվածությունն ունի ոչ միայն անհատական բնույթ, այլ նաև գոյություն ունեն ոչ ֆորմալ արտադրական միավորներ՝ չգրանցված ձեռնարկություններ:

Համաձայն Ասիական Զարգացման բանկի 2010թ.-ի ուսումնասիրության՝[13] Հայաստանի ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմում է 52.1%, ինչը համարժեք է 621,700 աշխատատեղի: Կանանց շրջանում այն 53.4%, է, իսկ տղամարդկանց շրջանում՝ 51.0%: Ոչ ֆորմալ զբաղվածության տոկոսը անհամեմատ բարձր է գյուղական վայրերում՝ 82.1%, քաղաքաբնակ վայրերում այն կազմում է 24.5%: Ոչ ֆորմալ զբաղվածությունը ամենաբարձր տոկոսն ունի գյուղատնտեսական ոլորտում՝ 98.6%, ինչն ակնհայտ վկայում է, որ այս ոլորտում իսպառ բացակայում են ֆորմալ ինստիտուցիոնալ կարգավորումները, օրինակ՝ գրանցումը որպես միկրոձեռնարկություն, ԱՁ, ՍՊԸ, ՓԲԸ և այլն: Ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության երկրորդ ամենաբարձր տոկոսն ունի շինարարությունը՝ 34.2%, որին հաջորդում են մեծածախ և մանրածախ առևտուրը՝ 26.9%, արտադրությունը՝ 11.8%: Ըստ վարչատարածքային միավորների բաշխվածության՝ ոչ ֆորմալ աշխատանքը Երևանում կազմում էր 38.8%, Արարատում՝ 12.1%, Շիրակում՝ 9.1%, Արմավիրում՝ 9.1%, Սյունիքում՝ 8.8%, Կոտայքում՝՝ 4.9%: Ոչ ֆորմալ զբաղվածության մասին վերջին տասը տարիներին չկա պաշտոնական վիճակագրություն:

Չգրանցված աշխատանքով աշխատողներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1) Ինքնազբաղվածներ ու գործատուներ, որոնք իրականացրել են չգրանցված տնտեսական գործունեություն,
2) չգրանցված տնտեսական գործունեություն իրականացնող գործատուներ, ինքնազբաղվածների մոտ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամներ, բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողներ,
3) չգրանցված տնտեսական գործունեություն իրականացնող արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամներ:

Գործատուի հետ բանավոր համաձայնությամբ աշխատող վարձու աշխատողները և ինքնազբաղվածներն ու գործատուները, որոնք իրականացրել են չգրանցված տնտեսական գործունեություն, հիմնականում գործում են առևտրի, ավտոմեքենաների նորոգման, հյուրանոցների և ռեստորանների, տրանսպորտի և կապի ոլորտում, որին բաժին է ընկնում 35.3%, որից ոչ գյուղատնտեսական ոլորտում, համաձայն տարբեր հաշվարկների՝ 19.2% կամ մինչև 19%:

Հայաստանում չկա վիճակագրություն չգրանցված աշխատողների թվի, ինչպես նաև ոլորտային բաշխվածության վերաբերյալ: Չկան նաև բավարար տվյալներ չգրանցված

[13] Asian Devlopment Bank, The Informal Sector and Informal Employment in Armenia, (2010), Armenia, https://www.adb.org/publications/informal-sector-and-informal-employment-armenia.

աշխատողների մասին՝ տարիքային, գենդերային, սեռային և այլ բացվածքով: Դրանից բացի՝ Հայաստանում գոյություն չունեն կազմակերպություններ, որոնք զբաղվում են չգրանցված աշխատողների խնդիրները տեսանելի դարձնելու ուղղությամբ:

Չգրանցված աշխատողներն ամենախոցելի խմբերից մեկն են, քանի որ փաստացի չեն օգտվում մի շարք սոցիալական և տնտեսական ծրագրերից: Աշխատանքը չգրանցելու պատճառների թվում են հովանավորչությունը, հարկային դաշտը և աշխատանքային հարաբերությունները կաշկանդող օրենսդրությունը, ոչ արդյունավետ բյուրոկրատական համակարգը և այլն: Ստվերի անհանգստացնող չափերի մասին է խոսում նաև ԱՄՀ-ի այն դիտարկումն, ըստ որի Հայաստանի աշխատուժի ավելի քան 58%-ը գտնվում է կենսաթոշակային դաշտից դուրս:[14]

4.Չգրանցված աշխատանքի հիմնական ոլորտները

Իրականացված հետազոտության խնդիրներից է եղել Հայաստանում չգրանցված աշխատանքի հիմնական ոլորտները բացահայտելը: Ըստ իրականացված փորձագիտական հարցազրույցների տվյալների՝ առանձնացվել են չգրանցված աշխատանքի հետևյալ հիմնական ոլորտները.

- ծառայությունների և սպասարկման ոլորտը. ամենատարածված ու նաև թաքնված աշխատատեղերը ծառայության և սպասարկման ոլորտներում են: Սպասարկման, առևտրի, այսինքն՝ սննդի մատակարարում, սպասարկում, առևտուր, վաճառք, առևտրի կետերում աշխատանք, մեծ կամ ամենափոքր խանութներ, տաքսու վարորդներ, մեծ ու փոքր ճաշարաններ և այլն,
- սեզոնային աշխատանքը (որոշակի կարճաժամկետ ցիկլերով, շուկայի պահանջարկի հետ կապված ծառայությունների ոլորտ),
- գյուղատնտեսությունը (քանի որ զարգացող տնտեսությունների համար դեռևս չկան գյուղատնտեսական աշխատանքներից ստացվող եկամուտների հայտարարագրման ներդրված մեխանիզմներ և այլն),
- մասնավոր ներտնային ծառայությունների ոլորտ՝ շինարարական աշխատանքներ, վերանորոգման մասնավոր ծառայություններ անհատական մակարդակում, դայակի աշխատանք, մաքրուհիներ: Դրանցից ամենատարածվածը «Ֆայլաբազարն» է,
- շինարարություն. հիմանականում օրավարձով աշխատող բանվորներն են, շինարարները բանվորների հետ որպես կանոն չեն կնքում պայմանագրեր: Շինարարության ոլորտում մեծ է թաքնված աշխատուժի ռիսկը և հարկ է նշել, որ այս խումբն աշխատանքի վտանգավորության աստիճանով գտնվում է ամենառիսկային գոտում,

14 «Կովկաս եւ Կենտրոնական Ասիա. Տարածաշրջանային տնտեսական հեռանկարներ» զեկույց, Արժույթի միջազգային հիմնադրամ:

- զանգվածային լրատվամիջոցներ, տնտեսվարող, որը լրատվություն տարածելու գործառույթ է իրականացնում և աշխատանքի ընդունվողի հետ պայմանագիր չի կնքում,
- երեխայի աշխատանքի հետ կապված համակարգը: Մանկական աշխատանքը և երեխաների ներգրավվածությունը ծնողների հետ տարբեր աշխատանքներում: Սա չկարգավորված ոլորտ է, շատ ռիսկային,
- ժամանցի, արվեստի, մշակութային ոլորտի անհատ ստեղծագործողների գործունեությունը:

Չգրանցված աշխատողների ամենալայն շրջանակը սպասարկման ոլորտում է, այսինքն՝ սպասարկման, առևտրի, սննդի մատակարարման, թե՛ մեծ, և թե՛ ամենափոքր խանութներում, արագ սննդի կետերից մինչև բավականին շատ հաճախորդներ ունեցող և բավականին մեծ բիզնես հանդիսացող կազմակերպություններում: Այստեղ գուցե ոչ ամբողջ անձնակազմը, բայց մի մասը սովորաբար լինում է չգրանցված:

Զբաղվածության առանձնահատուկ հարթակ է, սակայն, որևէ կարգավորման չենթարկվող «Ֆայլաբազարը» որտեղ քաղաքացիները կարող են գտնել ծառայությունների լայն տեսականի: Կան գրանցված կազմակերպություններ, որոնք հավաքագրում են «Ֆայլաբազարի» աշխատողներին: Կազմակերպությունը բանավոր համաձայնության մեջ է մտնում աշխատողների հետ, օրինակ՝ պատվերից 50-տոկոս կիսվելու պայմանով: Ստացվում է՝ այդ կազմակերպությունները, հանդիսանալով միջնորդ, գումար են աշխատում «Ֆայլաբազարի» աշխատուժի ու քաղաքացիների հաշվին:

Կան անձնական ծառայություններ կամ մանր մասնավոր ծառայություններ՝ վերանորոգումից մինչև դայակներ, փոքր սրճարան կամ ճաշարան, տաքսու վարորդներ, հավաքարարներ, որոնք գրանցված չեն և գրանցվելու հմտություններ և տեխնիկական հնարավորություն էլ չկա: Հենց այս ոլորտներն են զգալի վնաս կրել, որովհետև մարդիկ մնացել են տանը, ակտիվությունը՝ նվազել, և այսպիսով՝ այս մարդկանց ոչ ֆորմալ զբաղվածությունը վերափոխվել է ոչ ֆորմալ գործազրկության. նրանք որևէ փոխհատուցում չեն ստացել պետությունից, իսկ պատվերները չեղարկվել են:

Կարևոր և բավարար չհետազոտված թեմա է մանկական աշխատանքը կամ երեխաների ներգրավվածությունն իրենց ծնողների հետ վերջիններիս կողմից վճարի դիմաց կատարվող տարբեր աշխատանքներում: Երեխաները հաճախ ներգրավվում են ծնողների հետ նման աշխատանքում, հատկապես եթե դրանք մաքրման աշխատանքներ են, թե՛ տանը, և թե՛ գրասենյակներում, առևտրի և սպասարկման ոլորտներում: Երեխաների ամենաշատ ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտում է՝ աշխատանքային հարաբերությունների ևս մեկ չկարգավորված ոլորտ:

Շինարարությունը, իհարկե, մասնակի վնասներ կրել է: Որոշ շինարարություններ շարունակվում են, որոշ շինարարություններ կանգնել են: Ոչ ֆորմալ շինարարություններն ավելի խոցելի են, քան ֆորմալ գրանցված շինարարությունները և խոշոր օբյեկտները:

Գյուղատնտեսության ոլորտում կենտրոնացած է ամենամեծ թաքնված աշխատուժը: Գյուղատնտեսությունը սպեցիֆիկ է ամբողջ աշխարհում, հատկապես զարգացող տնտեսություններ ունեցող պետություններում, որտեղ դեռ չկան գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալելու համար նախատեսված համապատասխան

մեխանիզմներ: Գյուղատնտեսությունն այս պահի դրությամբ խոցելի չէ, գյուղատնտեսության վրա այս ճգնաժամի ազդեցությունը շատ փոքր է, և ընդհանրապես դա այն ոլորտն է, որը նման ճգնաժամներից, համաճարակներից շատ քիչ վնասներ է ունենում: Իհարկե, տեսականորեն հարցը հետազոտության կարիք ունի, որպեսզի վերհանվի, թե ինչ իրավիճակ է գործնականում: Գյուղատնտեսության ոլորտում երկու ռիսկ կա. մեկը թաքնված աշխատանքն է, մյուսը՝ երեխայի համար արգելված աշխատատեսակը (օր.՝ բարձրության վրա աշխատանքը): Կառավարության որոշումը սահմանում է, որ բարձրության վրա աշխատանքը ռիսկային է և մինչև 18 տարեկանների համար արգելված աշխատանք է՝ որպես աշխատանքի վատթարագույն տեսակ:[15]

Որքան էլ զարմանալի է՝ հաճախ զանգվածային լրատվամիջոցներն ունեն չգրանցված աշխատողներ: Սրանք տնտեսվարողներ են, որոնք լրատվություն տարածելու գործառույթ են իրականացնում և հաճախ աշխատանքի ընդունվողի հետ պայմանագիր չեն կնքում կամ կնքում են մասամբ: Բանավոր քննարկում են աշխատանքային պայմանները, նշանակում չվճարվող փորձաշրջան, և այդ ընթացքը տևում է ամիսներ: Որոշ ժամանակ անց, դժգոհելով փորձաշրջանի արդյունքներից, առանց վճարելու հեռացնում են աշխատանքից:

Վերը նշվածը թաքնված աշխատուժի ձևավորման մեկ օրինակ է: Պատճառը հիմնականում աշխատողի չիմացությունն է, որից օգտվում է գործատուն: Հաճախ պատահում է, որ փորձաշրջանի ընթացքում աշխատողի հետ կնքվում է ժամանակավոր պայմանագիր, իսկ երբ փորձաշրջանն ավարտվում է, աշխատողին ներկայացվում է, թե պայմանագիրը շարունակում է գործել, այնինչ այն ժամկետի սպառման պատճառով դադարում է: Կան դեպքեր, երբ գործատուն աշխատողի հետ համաձայնություն է ձեռք բերում լրացուցիչ թղթաբանությունից խուսափելու համար, քանի որ, իբր, առանց գրանցման աշխատելն ավելի հեշտ է: Ժամանցի, արվեստի, մշակույթի ոլորտի գործիչները, անհատ ստեղծագործողները հիմնականում ինքնազբաղ, բայց չգրանցված աշխատողներ են: Կարևոր է սակայն պարզել, թե այս խմբերում որ մարդիկ են իսկապես տուժել համավարակի պատճառով:

5. Չգրանցված աշխատողների կարիքներն ու խնդիրները

Ռիսկային գոտում հայտնված աշխատանքի տեսակները

Քովիդ-19 համավարակով պայմանավորված՝ կարիքի մեջ են հայտնվել կամ գտնվում են սահմանային գոտում չգրանցված այն աշխատողները, որոնք աշխատում են ծառայությունների մատուցման և սպասարկման ոլորտում, կատարում են սեզոնային կարճաժամկետ և օրավարձով աշխատանք, կատարում են մասնավոր անհատական ծառայություն՝ մաքրուհիներ, դայակներ, «Ֆայլաբազարի» միջոցով աշխատանք փնտրողներ, բացօթյա առևտուր, մարդիկ, որոնք իրականացնում են մասնավոր շինարարական

[15] ՀՀ Կառավարության որոշում, 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2308-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ,https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21817:

աշխատանքներ, ինքնազբաղ, բայց չգրանցված աշխատող արվեստագետներ, անհատ ստեղծագործողներ, նկարիչներ, բրոկերական շուկա և արտագնա աշխատողներ: Ամենաշատը սրվել է մաքրարարների, տնային աշխատողների, սեզոնային աշխատողների/արտագնա աշխատողների, օրավարձով աշխատողների, ինքնազբաղների, արհեստավորների ու բանվորների, ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված գյուղաբնակների, սպորտի և այլ մասնավոր խմբակներում աշխատողների կարիքները, որոնք ներկայացված են ստորև:

Տուժած սոցիալական խմբերը

Քովիդ-19-ի ազդեցությունն ամենաշատը նկատվել է այն չգրանցված սոցիալական խմբերի մոտ, որոնք ի սկզբանե եղել են խոցելի: Ամենատուժածը բանակչության 45-55 տարեկան հատվածն է, որը պետական սոցիալական պաշտպանության երաշխիքների տեսանկյունից ամենազրկվածն է, որևէ տիպի աջակցություն չի ստանում, աշխատաշուկայից հիմնականում դուրս է մղված: Սրվել է իրավիճակը նաև հաշմանդամություն ունեցող ընտանիքներում, հատկապես՝ հաշմանդամ երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներում: Կանայք ավելի խոցելի են, քան տղամարդիկ, քանի որ կանանց շրջանում չգրանցված աշխատողներն ավելի շատ են: Միայնակ մայրերի պարագայում տուժում են նաև իրենց երեխաները: Տարեցների դեպքում փորձագիտական կարծիքն այն է, որ նրանք ավելի ապահովագրված են ֆինանսական տեսանկյունից, քանի որ ունեն կայուն եկամուտ՝ կենսաթոշակ: Բացի այդ՝ նրանք այն խումբն են, որոնք ՀԿ սեկտորից ստացել են համեմատաբար ավելի շատ օգնություն: Իսկ ընդհանուր առմամբ հիմնական տուժած խմբերն են՝ կանայք, հատկապես՝ միայնակ մայրերի խումբը, համշանդամություն ունեցող անձիք, էթնիկ և սեռական փոքրամասնությունները:

Սրված կարիքները

Քովիդ-19-ի արդյունքում սրված կարիքները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ սոցիալական, կրթական և առողջապահական:

Սոցիալական կարիքներ

Բնակարանի վարձակալում. համավարակով պայմանավորված՝ սրվել է *բնակարանի խնդիրը*, քանի որ եկամտի բացակայության պատճառով վարձակալությամբ ապրող ընտանիքները, որոնք մեծ թիվ են կազմում չգրանցված աշխատողների շրջանում և հատկապես փոքր քաղաքներում, ի վիճակի չեն եղել վճարել վարձավճարը, որի հետևանքով կա՛մ վտարվել են բնակարանից, կա՛մ շարունակում են կուտակել բնակարանի վարձավճարի պարտքը: Բնակարանի վարձերի պարբերաբար ուշացման հետևանքով ի հայտ են եկել տարբեր կոնֆլիկտներ վարձատուի հետ և ընտանիքի ներսում, ինչը նաև նպաստել է ընտանեկան բռնության դեպքերի աճին: Թեև պետության կողմից վճարված կոմունալ ծախսերի փոխհատուցման ծրագրից շատերն են օգտվել, սակայն դրա տևողությունը և չափը չի ընկալվել որպես բավարար աջակցություն:

Վարկերի տոկոսադրույքների վճարման բարդություններ. շատ են *վարկերի տոկոսադրույքների մարման* ուշացման հետ կապված խնդիրները: Վարկերի տոկոսադրույքները վճարելու անհնարինությամբ պայմանավորված՝ շատերը ստիպված են եղել կրկնակի անգամ դիմել վերավարկավորման՝ նախորդի տոկոսները մարելու համար, սակայն այդ վարկը ևս ի վիճակի չեն եղել վճարել, և իրենց խոսքերով՝ հայտնվել են «սև ցուցակում», որոշներին այցելել է ԴԱՀԿ-ը:

Սննդի անհրաժեշտ կարիքների բավարարում. հարցազրույցի մասնակիցները նշում են, որ միշտ չէ, որ կարողացել են բավարար սնունդ ունենալ ամեն օրվա համար: Եղել են դեպքեր, երբ, օրինակ, ճաշել են օրը մեկ անգամ կամ օրումեջ: Մեծ մասն իրենց ծանոթ խանութպաններից պարտքով սնունդ են վերցրել և ավելացրել իրենց անունը պարտապանների ցուցակում: Աշխատանք գտնելուն պես այդ պարտքերը պետք է վերադարձվեն:

Երեխաների հագուստ. երեխաների հագուստը ևս խնդիր է եղել, սակայն քանի որ տանն են մնացել, նոր հագուստի կարիքը շատ սուր չի զգացվել: Այս դեպքում օգնության են հասել բարեկամները կամ հարևանները և օգտագործված հագուստ են տվել կարիքավոր ընտանիքներին: Երբեմն օգնության են հասել տեղական բարեգործական կազմակերպությունները:

Բնակարանի ջեռուցման խնդիրներ. համավարակի սկզբանական շրջանում՝ մարտին, եղանակը դեռևս ցուրտ էր, ու մարդիկ մինչև ապրիլի կեսերը բնակարանները օրվա որոշ ժամերին ջեռուցելու կարիք էին ունենում: Սա նաև կարևոր է այն առումով, որ համավարակի սպասվող ալիքիների և դրա հետևանքների պատճառով աշնանը և ձմռանն այս խոցելի խմբերը կկանգնեն այդ նույն կարիքի առջև:

Առողջապահական կարիքներ

Պլանային ստուգումների անհնարինություն քրոնիկ հիվանդների դեպքում. բավարար եկամուտ չունենալով, ինչպես նաև վարակից խուսափելով՝ առողջության հետ կապված խնդիրներ ունեցողներից շատերը չեն գնացել հիվանդանոց պլանային, ախտորոշիչ կամ շտապ հետազոտությունների:

Դեղորայքի ձեռքբերման մատչելիություն. առողջապահական ոլորտի մեկ այլ հիմնախնդիր է նաև անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերման բարդությունն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ սղության պատճառով: Դրա հետևանքով սրվել են առողջական խնդիրները:

Հոգեբանական աջակցության բացակայություն. վերոնշյալ խմբերում դրա կարիքն ավելի մեծ էր, քան ապահովված խմբերում, որոնցում միայն Քովիդ-19-ով պայմանավորված վախերի ու մեկուսացման հոգեբանական հետևանքներն էին: Այս խմբերում դրանց գումարվում էին նաև սոցիալապես անապահով վիճակում հայտնվելու, աշխատանք կորցնելու, դրա հետևանքով վերցրած վարկերի գումարները մարելու հետ կապված մտածմունքներն ու այլ սթրեսներ:

Կրթական կարիքներ

Համացանցի մատչելիություն. կրթությունից դուրս մնալու խնդիրները բավականաչափ մեծ են եղել և պայմանավորված հենց սոցիալական կարգավիճակով: Նույնիսկ եթե դպրոցները դպրոցականներին սարքեր են տրամադրել առցանց սովորելու համար, միևնույնն է՝ ընտանիքները հնարավորություն չեն ունեցել վճարելու համացանցի ծառայության համար: Հետաքրքրական է, որ կրթական գործունեություն իրականացնող չգրանցված աշխատողների շրջանում աշխատանքն ընդլայնվել է, քանի որ ավելի շատ մարդիկ են սկսել սովորել առցանց, հատկապես՝ լեզուներ, ինչը վկայում է մարդկանց՝ տանը մնալու և բավարար ժամանակ ունենալու փաստի մասին:

Համակարգիչների և դրանցից օգտվելու գիտելիքի բացակայություն. այն ընտանիքներում, որտեղ եղել են դպրոցական երեխաներ, հաճախ չեն եղել համակարգիչներ: Մի քանի ընտանիք, որոնց տրվել են պլանշետներ կամ հարևանները, ծանոթներն ու բարեկամներն են ժամանակավորապես դրանք տրամադրել, չեն կարողացել օգտվել պլանշետներից, քանի որ չեն ունեցել համակարգչային ծրագրերից օգտվելու հմտություններ:

Բնակարանային նեղվածք. հետազոտությանը մասնակցած անձինք նշում էին, որ այն ընտանիքներում, որտեղ կար մեկից ավելի երեխա, և որտեղ փորձում էին հեռավար դասընթացները կազմակերպել բոլորի համար՝ դասապրոցեսը հիմնականում ձախողվում էր: Քանի որ նույն սենյակում հնարավոր չէր լինում միաժամանակ խոսել, երեխաները միմյանց խանգարում էին, կռվում էին և չէին կարողանում կենտրոնանալ դասի կամ դասապրոցեսի վրա:

Այլ վատ պայմանների պատճառով առցանց դասերին մասնակցության բարդություններ. մարտ և ապրիլ ամիսներին ընտանիքները հավաքվում էին մեկ սենյակում, քանի որ հնարավորություն ունեին ջեռուցելու միայն այդ սենյակը: Այդ մեկ սենյակը ծառայում էր միաժամանակ որպես խոհանոց, ննջասենյակ և ընդհանուր սենյակ: Դպրոցական երեխաները հանձնարարված դասերը պատշաճ սովորելու հնարավորություն չէին ունենում, քանի որ միմյանց խանգարում էին: Նրանց խանգարում էր նաև իրենց ծնողների ներկայությունը, որոնք կենցաղի հետ կապված աղմկոտ գործերով էին զբաղված: Սա գրեթե անհնարին էր դարձնում դասերի վրա կենտրոնացումը:

Ընտանեկան բռնություն. ի հայտ են եկել կամ սրվել են ընտանեկան բռնության դեպքերը: Սա առանձին հետազոտություն պահանջող թեմա է:

Խնդիրների սրման պատճառները

Խնդիրների սրման պատճառը հիմնականում այն է, որ չգրանցված աշխատողները չեն ունեցել խնայողություններ և ստացած եկամուտը հենց տվյալ ամսվա ընթացքում էլ ծախսվել է՝ հազիվ բավարարելով հիմնական կարիքները, պարտքերը և վարկերը: Համավարակով պայմանավորված՝ պատվերները կա՛մ չեղարկվել են, կա՛մ դադարել, քանի որ մարդիկ կա՛մ եկամուտ չեն ունեցել, կա՛մ վախեցել են օգտվել տարատեսակ ծառայություններից՝ խուսափելով վարակվելուց: Որոշ դեպքերում պատվերները շարունակվում են, սակայն պատվիրատուները ուշացնում են վճարները: Նշվել է նաև, որ փակ ճանապարհների հետևանքով արտագնա աշխատողները մնացել են Հայաստանում, իսկ տեղերում էլ հնարավոր

չի եղել գործ գտնել աշխատատեղերի բացակայության պատճառով: Այնումենայնիվ, կենցաղի փոփոխությունների արդյունքում որոշ ծախսեր նաև նվազել են՝ շարժունակության սահմանափակումով պայմանավորված:

Չգրանցված աշխատողների կողմից ձեռնարկված քայլերը

Չգրանցված աշխատողների մեծ մասը, խոսելով այս պայմաններում իրենց կողմից ձեռնարկված քայլերի մասին, նշում են, որ ոչ մի քայլ չեն ձեռնարկել՝ վստահ լինելով, որ իրենցից ոչինչ կախված չէ: Շատերը չեն դիմել Քովիդ-19-ի շրջանակներում պետական միջոցառումների ծրագրերին, քանի որ կա՛մ ընդհանրապես տեղյակ չեն եղել այդ միջոցառումներից, կա՛մ եթե տեղյակ են եղել՝ դրանք իրենց չեն վերաբերել, կա՛մ էլ միջոցառումների հայտարարությունները բարդ ընկալելի լեզվով են եղել և եղել են առցանց, ինչը հասանելի չի եղել ամենաաղքատացած խմբերին: Միայն մի փոքր խումբն է, որ նոր վարկ է վերցրել (որոշների դեպքում վարկը մերժվել է՝ վատ վարկային պատմություն ունենալու պատճառով), արտերկրից հարուստ բարեկամներն են օգնել կամ պարտքով գումար տվել, փորձել են խնայողաբար ծախսել միջոցները կամ վերառրակավորվել՝ նոր աշխատանք գտնելու նպատակով:

Պետական աջակցության ակնկալիքները

Չգրանցված աշխատողների հետ հարցազրույցների ընթացքում նրանք նշում են, որ չգրանցված աշխատողներին վերաբերող պետական ծրագրերը պետք է առաջին հերթին ուղղված լինեն երեխաների կարիքների բավարարմանը, քանի որ եթե ընտանիքում երեխա կա՝ գումարը ծախսվում է երեխայի կարիքների վրա: Այնուհետև կարևորում են նաև սոցիալական ծրագրեր՝ ուղղված համշանդամություն ունեցող միայնակ տարեցների խմամքին, կրթության իրավունքը ապահովելուն, աղքատացած ընտանիքներին արտոնություններ տրամադրելուն, առողջության առաջնային ապահովագրմանը, բնակարանների ձեռքբերման հնարավորությանը և վարկային արձակուրդի կամ համաներման հարցերին: Որպես նույնականացման և կարիքի գնահատման մեխանիզմ՝ չգրանցված աշխատողները կարևորել են համայնքներում սոցիալական աշխատողների կենտրոնական դերը:

Պետական աջակցության ծրագրերին մասնակցությունը

Հարցմանը մասնակցած չգրանցված աշխատողները, որոնք բնակվում են միջին և փոքր քաղաքներում, հիմնականում նպաստառու ընտանիքներից են: Երևանում չգրանցված աշխատողների ընտանիքում չի եղել նպաստառու ընտանիքի մասնակից: Հարցազրույցին մասնակցած բոլոր մասնակիցների դեպքում զեղչվել են կոմունալ ծախսերը, միայն երկուսն են դիմել Քովիդ-19-ով պայմանավորված պետական միջոցառումների ծրագրին և ստացել են երեխաների համար նախատեսված գումարը: Իրավիճակն առավել սրված է փոքր ու միջին մեծության քաղաքներում, իսկ Երևանում վիճակը համեմատաբար լավ է, քանի որ հնարավոր է եղել թեև ժամանակավոր, բայց այլ աշխատանք գտնել: Զրկանքների առումով երևանաբնակները համեմատաբար ավելի քիչ են տուժել, քանի որ ի սկզբանե ապահովված են եղել որոշակի կայուն ռեսուրսներով:

Հետազոտությանը մասնակցած չգրանցված աշխատողների մեծ մասը չի օգտվել պետական ծրագրերից հետևյալ հիմնավորումներով՝ հիմնականում տեղյակ չեն եղել, դիմել են

աջակցության համար և չեն ստացել, չեն վստահել, որ կստանան և ձեռնպահ են մնացել, հայտի միայն առցանց հասանելիությունը սահմանափակել է նրանց, քանի որ չեն ունեցել համապատասխան միջոցներ՝ համակարգիչ և համացանց, իսկ հեռախոսից դժվար են օգտվում նման նպատակներով: Այնուամենայնիվ, բոլորը նշում են, որ եթե լինեն աշխատատեղեր և արժանապատիվ աշխատանք, իրենք պատրաստ են աշխատել և հրաժարվել սոցիալական որևէ աջակցության ծրագրից:

Պետական իշխանության նկատմամբ վստահության հարցը

Հարցազրույցներից պարզ է դառնում, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեծ վստահություն է վայելում հասարակության շրջանում, սակայն հասարակության վստահությունը այդքան էլ բարձր չէ առողջապահական համակարգի կամ այլ պետական կառույցների նկատմամբ: Պետական ծրագրերի մասին իրազեկման հիմնական միջոցները եղել են հանրային հեռուստաընկերության լրատվական ծրագրերը, ֆեյսբուքը և համայնքը: Ընդ որում՝ փոքր քաղաքներում առաջնային են եղել Հանրային հեռուստաընկերության լուրերը և դրանց նկատմամբ վստահությունը: Նշում են նաև, որ վերջին մեկ տարում է զարգացել Հանրային հեռուստաընկերության նկատմամբ վստահությունը: Երևանում առաջնային են միջանձնային հաղորդակցությունը և այդ աղբյուից ստացված տեղեկությունը:

Որոշ հատվածներ չգրանցված աշխատողների հետ հարցազրույցներից:

- *Ամուսնուս տնից գնացել եմ, քանի որ գործը կորցրեց, տունը նստեց, ամբողջ օրը կռվում էինք: Աղջիկս ոտքը կոտրել է, պարտք եմ վեցրել, որ տանեմ հիվանդանոց, դեղեր առնեմ: Մորս մոտ եմ ապրում, մայրս հաշմանդամ է, դեղերի փող չեմ կարողանում հայթայթել:*
- *Մենք հավաքած գումար չենք ունեցել, օրվա եկամուտը նույն օրը ծախսել ենք, ու այդ եկամուտը միանգամից կտրվեց: Մինչև համավարակը մեզ թվում էր, թե աղքատ ենք, բայց դրանից հետո նոր զգացինք, թե ինչ ասել է աղքատ: Կուզենամ, որ Նիկոլը լավ ճանաչի երկրի բնակիչների հոգսերը ու բոլորին մի խմբում չդասակարգի:*
- *Էլ տուն մաքրելու պատվերներ չեմ ստանում, ես եմ զանգում, հարցնում եմ՝ պե՞տք է, որ գամ, թե՞ չէ. ասում են, որ վախենում են, հնարավոր է՝ վարակված լինեմ, չեն կանչում:*
- *Շատ կարիքներ են սրվել, բայց առաջնայինն առողջության հետ է կապված, մի քանի հետազոտություն պետք է անցնեի, բայց գումար չունեմ: Գումարը միայն սննդին է հերիքում հիմա:*
- *Նախորդ տարվանից ենթարկվում եմ ընտանեկան բռնության ամուսնուս կողմից, երեխաներին վերցրել, թողել-եկել եմ հորս տուն, համավարակը շատ ուժեղ ազդեցություն չի ունեցել, քանի որ դրանից առաջ էլ վատ էինք ապրում, համարյա նույնքան վատ, որքան հիմա:*
- *Հիմնական աշխատանք երբեք չեմ ունեցել, հավաքած գումար չենք ունեցել, ես ամուսնացել եմ դպրոցից հետո ու չեմ սովորել ու ոչ մի անգամ լավ աշխատանք չեմ ունեցել, միշտ ասել են՝ նա չի կարող այս գործն անել, կրթված չի: Շատ կարևոր է, որ մարդը լավ կրթություն ստանա: Հիմա արդեն անգամ կրթվածները գործ չեն գտնում համավարակի պատճառով, ինձ նմանը ո՞նց գտնի:*

- *Ոչ մի փոփոխություն չեմ զգացել, նույն կերպ տանջվում եմ՝ ինչ առաջ, որ մի կոպեկ բերեմ տուն:*
- *Ինչպե՞ս է, որ ընտրությունների ժամանակ գալիս են, դուռը ծեծում, հարցուփորձ անում: Թող հիմա էլ այդ պետական աշխատողները դռներուռ անցնեն, որ տեսնեն, թե ով կարիք ունի, ոչ թե իրենց բարեկամների անունները գրեն:*
- *Լավ կլիներ գրանցվեի, ես նույնիսկ մտածել եմ, որ պետք է գնամ ու գրանցվեմ, բայց ասել են՝ մեր գործի համար չեն գրանցում: Թե չէ ուզում եմ գրանցվեմ, որ հետո գոնե թոշակ ստանամ:*
- *Պետությունը պետք է ուզենա գործ անել, որ ուզենա՝ կգտնի ձևը:*
- *Չեմ ուզում գրանցվել, քանի որ ես ընդամենը կոպեկներ եմ ստանում ու եթե մի բան էլ պետությանը հարկ տամ՝ ինձ բան չի մնա: Թող հարկեր մուծի նա, ով նորմալ եկամուտ ունի, իմ եկամուտը չնչին է:*
- *Վախն է սրվել, ու քանի որ այն սրվել է, բոլորս ներվային ենք դարձել, անընդհատ կոնֆլիկտ է առաջանում՝ տանը, խանութում, պատվիրատուի հետ: Հետո ես երեք անչափահաս երեխա ունեմ ու տան խնդիր ունեմ, վարձով ենք ապրում:*
- *Ամեն ինչ անում եմ, որ մեր գլխին տանիք լինի, երեխաները սոված չլինեն, որ կրթված լինեն ու նորմալ աշխատանք ճարեն:*
- *Ես տներ եմ վերանորոգում, ազատ տներ եմ վերցում ու վերանորոգումը մենակ անում, մի քանի պայմանավորվածությունից պատվիրատուները հրաժարվեցին, բայց նոր առաջարկներ եղան, չենք բոլոքում, գործը չի կանգնել, չնայած ամեն տարվա նման չի: Չեմ հասցնում փող հավաքել, որ իմ սեփական տունն ունենամ, տնից տուն վարձով ապրելը կյանք չէ:*
- *Այնքան բան կա այս աշխարհում անարդար, թող մեր անարդարությունն էլ այդ չգրանցվածությունը լինի, որ մեր երեխաների ծախսերը հոգալու համար է:*
- *Մարդը եթե նորմալ աշխատանք ունենա, նրան ոչ մի աջակցություն էլ հարկավոր չէ, պետությունը պետք է աշխատատեղեր ստեղծի, մնացածը մենք կանենք՝ կաշխատենք, կստեղծենք:*
- *Ես վարձով ապրող եմ ու միշտ խնդիր ունեմ բնակարանի վարձը ժամանակին վճարելու հետ կապված, երկու անչափահաս երեխա ունեմ, ես հիվանդություն ունեմ, դեղորայքս չեմ կարող առնել, երեխաներս դպրոցական են, չեմ հասցնում ապահովել անհրաժեշտ բաներով:*
- *Ես տնակում եմ գրանցված, տնակն ահավոր վիճակում է: Բազմիցս դիմել եմ Գյումրիի քաղաքապետին, բայց դուռը երեսիս փակել են՝ պատճառաբանելով, թե ինչո՞ւ եմ տունը կորցրել, ի՞նչ եմ եկել ու պահանջներ ներկայացնում:*
- *Երեխաների հեռավար կրթության դասընթացների կազմակերպման համար օգնություն է պետք, սոցիալական կենտրոնն աջակցել է, պլանշետ է տվել, բայց համացանցը պարտքով միացրի, որովհետև չէի կարող երեխային կտրել դասերից: Բայց հիմա համացանցն անջատել եմ տվել, քանի որ արձակուրդներ են: Չեմ հասցնում մուծել:*
- *Այդ օգնություններն էլ գրոշներ են: Ինձ համար էական նշանակություն չունի: Մենք անտեսված հատվածն ենք:*

- *Հա՛մ սոցիալական, հա՛մ առողջական խնդիրներ ունեմ, թրոմբ ու վարիկոզ ունեմ, բայց փող չկա, որ գնամ բժշկի կամ էլ եթե դեղեր նշանակի՝ ո՞նց առնեմ, նույնիսկ ի վիճակի չեմ առնել հատուկ նշանակված զուգագուլպան:*
- *Մնունդն ու հագուստը միշտ չէ, որ կարողանում ենք առնել: Ամիսներ են եղել՝ օրումեջ ենք հաց կերել:*
- *Ես 1988-ից այս կողմ աշխատում եմ, բայց երբեք գրանցված աշխատող չեմ եղել: Ինձ միշտ աշխատացրել են, բայց ես դրանից առանձնապես եկամուտ չեմ ստացել:*
- *Յոլա չենք գնում, վարկերի տակ ենք, վարկերը չենք կարողանում փակել, ջերմոցներ ենք ունեցել, վարկ ենք վերցրել, որ ներդրում անենք, բայց ծախսը չի հատուցվում:*
- *Հայաստանից փող ուղարկեցին, որ հետ գամ Մոսկվայից: Հիմա գյուղում կանչում են, որ մի սենյակ կամ պատ վերանորոգեմ, բայց գյուղացիներ են, հո մեծ գներ չես ասելու, ծանոթ մարդիկ են, էժանով անում եմ, այնքան, որ այդ օրը սոված չմնանք, տեսնենք ինչ է լինում վերջը:*
- *Եթե անելու գործ է լինում, գյուղապետը մեզ գտնում է, բայց եթե հերթը հասնում է մեզ օգնելուն՝ չի օգնում. ինքը ուրիշ ցուցակ ունի:*
- *Պատվերները քչացել են, բայց դեռ կան, ուղղակի վճարման հետ կապված խնդիր կա: Մենք չենք ուզում գործը ձեռից բաց թողնել, բայց պատվիրատուն էլ շատ փող չունի, նրա փողն էլ ուրիշ տեղից է գալիս, մաս-մաս է տալիս, մի կերպ հարմարվում ենք:*
- *Որպեսզի ես գրանցվեմ, պետք է ստաբիլ եկամուտ ունենամ: Եթե ստաբիլ եկամուտ չկա, ես որպես անհատ ձեռներեց գրանցվելու իմաստը չեմ տեսնում: Բացի այդ՝ ես էլ իմ աշխատանքով, միևնույնն է, զարգացնում եմ երկրի տնտեսությունը՝ ռեստորան, հյուրանոց, հացատուն եմ սարքում, որոնք փող բերող կետեր են:*
- *Տանս վիճակը լավ չէ, վարձով ենք բնակվում, անձրևների ժամանակ կաթում է, փող չունեմ, որ տանիք սարքեմ, չորս անչափահաս երեխա ունեմ, անցյալ տարի չկարողացա վարկս մուծեմ՝ 70,000 դրամ էր, հայտնվեցի «սև ցուցակում»՝ ոչ ոք ինձ այլևս վարկ չի տալիս:*
- *Առաջ ահագին լավ վիճակում էինք, ես շինարար-բանվոր էի, գործ միշտ կար, կինս էլ մի տարեց կին էր խնամում, հիմա ես էլ պատվեր չունեմ, տարեց կնոջն էլ տարան ծերանոց, երեխաները չկարողացան հեռավար դասերին մասնակցել, չնայած դպրոցը համակարգիչ տվեց, բայց որ համացանցային կապ չկա՝ չի աշխատում, ու ստիպված դասերին հեռախոսով ենք մասնակցել:*
- *Նախկինում նորմալ տանն էինք ապրում վարձով, բայց վիրուսի պատճառով տունը փոխել ենք, եկել ենք մի փլած տուն, 10.000 դրամով ենք հիմա վարձում, հիմա գումար է պետք, որ վառելափայտ առնենք, բայց գումար չկա:*
- *Միշտ այդ հարցը ինձ տալիս եմ՝ ո՞րն է պատճառը, որ մարդ կա՝ հա՛մ տուն ունի, հա՛մ նպաստ, լավ աշխատավարձ ունի, նպաստ ստացավ, իսկ ես ո՛չ տուն ունեմ, ո՛չ նպաստ: Չեմ հասկանում՝ ո՞նց է ստացվում այդպես:*
- *Ֆինանսական խնդրների մեջ ենք, նորմալ աշխատանք չունենք, վարկեր ու ապառիկներ ունենք ու չենք կարողանում հասցնել, բանկերի հետ խնդիրների մեջ ենք, տունը աշխատող ձեռք չունենք, առաջին կարգի հաշմանդամ թոշակառու ունենք, տանը բոլորն ինձ են նայում, որ սնունդ բերեմ: Համավարակից առաջ սնունդը կար, նույնիսկ ապառիկով բաներ եմ վերցրել տան համար:*

- *Շատ անարդար էր, որ պետությունը գրանցված աշխատողներին միայն օգնեց, մենք գրանցված չենք, բայց մենք էլ եկամուտներ ապահովում ենք պետության համար: Չէ՞ որ մենք էլ կարիք ունենք:*
- *Գումարը չի հերիքում սննդից բացի ուրիշ բանի համար, կոմունալների համար բարեկամները օգնում են, բայց չենք ձգում:*
- *Առողջական որոշ խնդիրներ կան, գումար չունենք, որ գնանք ստուգվելու ես ու կինս, երեխաներին պետք է սեպտեմբերի համար պատրաստենք դպրոց գնալուն: Մինչև վիրուսը տաքսի էի վարում, բայց համավարակի պայմաններում հաճախորդները քչացել են, ես էլ շատ չեմ աշխատում, վախենում եմ վարակվել:*
- *Քովիդ-19-ից առաջ հիմնականում ծայրը ծայրին էի հասցնում, խնդիրներ կային, բայց այսօրվա նման չէր, օրվա հացի փող կար, հիվանդանոցի փող կար, վարկերս փակում էի տեղը տեղին: Հիմա վարկերս չեմ կարողանում փակել, տոկոսներ են գալիս, հաշմանդամության կարգ ունեմ, դեղի գումարը չկա, հիվանդանոցները նորմալ չեն աշխատում, տրանսպորտ չկար, ոտքով եմ գնացել-եկել:*
- *Եթե մեզ չեն տալիս, չգիտեմ՝ էլ ում են տալիս:*

6. Չգրանցված աշխատանքի ոլորտում պետական ներկայիս քաղաքականության հիմնախնդիրների ու մարտահրավերների համառոտ ուրվագիծը

Չգրանցված աշխատողները պետության հետ հարաբերության մեջ հանդիպում են երկու հիմնական խնդրի՝[16] անբավարար իրավակարգավորումներ և անհամապատասխան և անբավարար սոցիալական պաշտպանություն: Առանցքային հարց է, թե ինչպես կարելի է գտնել պետական բոլոր մակարդակներում իրավակարգավորիչ լծակների ճիշտ համադրում, որոնք ոչ ֆորմալ աշխատողների համար կարող են գործունեության ավելի լավ միջավայր ստեղծել՝ ապահովելով նրանց կայուն եկամուտը: Հայաստանի Հանրապետությունը չի ճանաչում չգրանցված աշխատանքը որպես աշխատանք, և ոլորտային իրավական կարգավորումները չեն վերաբերում այս մեծ խմբին, նույնը նաև վերաբերում է չգրանցված աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցին, որտեղ ևս կան իրավունքի խախտման լրջագույն խնդիրներ:

Սոցիալական աջակցության խնդիրները

Չգրանցված աշխատողները բախվում են տնտեսական բարձր ռիսկերի, որոնցից անհրաժեշտ է ապահովագրել նրանց սոցիալական պաշտպանության տարբեր միջոցների օգնությամբ: Այս խմբին սոցիալական ապահովագրության տրամադրումը բարդ է, բայց ոչ անհնարին և կախված է աշխատողի աշխատանքի կարգավիճակից և ոչ ֆորմալ տնտեսության

[16] Roever, S., Alfers, L., Wanjiku, C., Rogan K. & M., with Agshar, C. and Mhalana, S., (2019) Workers' Rights in Informal Economies. .

չափից և ձևից: Անհարժեշտ են այնպիսի ծրագրեր, որոնք կբացահայտեն, կնույնականացնեն կարիքը և կտրամադրեն կարիքի վրա հիմնված աջակցություն: Տարբեր մեխանիզմներ կարելի է կիրառել կարիքավոր և օժանդակության առաջնային անհրաժեշտություն ունեցող չգրանցված աշխատողներին բացահայտելու համար: Անհրաժեշտ է կարիքների գնահատում և կարիքի վրա հիմնված անհատական աջակցության տրամադրում՝ սոցիալական ներառման նպատակով:

Ներկայումս ՀՀ-ում աղքատության գնահատման համար կիրառվում է բազմաչափ աղքատության մոդելը, որի հիմքում դրված են հինգ հիմնական կարիքներ՝ ծայրահեղ աղքատությունը, բնակարանային պայմանները, կրթությունը, առողջապահությունը և աշխատանքը: Սակայն ցածր է այդ համակարգի հասցեականությունը, որը, ըստ որոշ փորձագիտական գնահատականների, կազմում է 60-65%:[17] 2012 թվականից ՀՀ-ում սկսվել է ինտեգրացված սոցիալական ծառայության (ԻՍԾ) համակարգի ներդրումը, որի հիմնական նպատակն ընտանիքներին, անձանց իրենց կարիքների վրա հիմնված ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն է՝ նպաստելով այդ ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացմանը: Սակայն այս համակարգն իր ձևավորման ընթացքում հանդիպել է մի շարք կազմակերպակառավարչական, մասնագիտական կարողությունների իրականացման դժվարությունների և ամբողջությամբ չի կայացել մինչ օրս: Զբաղվածության ենթաոլորտում իրականացվող ծրագրերի բովանդակության մեջ հնարավոր չէ գտնել չգրանցված աշխատանքի կամ չգրանցված աշխատողների վերաբերյալ որևէ կետ: Ներկայումս պետության համար կարևոր ռազմավարական խնդիր է անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների աշխատանքային տարիքի անձանց ուղղորդումը դեպի աշխատանք, նրանց զբաղվածության ծրագրերում ներառելու և հետագայում աշխատանքի տեղավորման միջոցով: Այս ռազմավարության արդյունավետության գնահատումը առանձին հետազոտության կարիք ունի, քանի որ տվյալ ռազմավարության մեջ չկան բավարար երաշխիքներ և աշխատաշուկա ուղղորդելուց հետո հնարավոր է, որ այդ մարդիկ հայտնվեն նախկին իրավիճակում:

Ակնհայտ է, որ Հայաստանում սոցիալական աջակցության պետական քաղաքականությունը սևեռված չէ չգրանցված աշխատողների խնդրի վրա: Չկա սոցիալական աջակցության հատուկ բաղադրիչ, որը փնտրում և գտնում է մարդկանց չգրանցված աշխատանքի հիմքով, գնահատում կարիքը և տրամադրում անհատական աջակցություն: Այլ կերպ ասած՝ սոցիալական աջակցության ծրագրերը բավարար մարդակենտրոն չեն: Դրանք չեն փնտրում մարդկանց, փոխարենը՝ փնտրում կամ ստեղծում են միջնորդ կառույցներ, որոնց միջոցով փորձ է արվում այդ աջակցությունը հասցնել մարդուն: Սակայն արդյունքում ստացվում է, որ ռեսուրսներն ավելի շատ ծախսվում են այդ միջնորդ կառույցի վրա, քան կարիքավոր մարդկանց: Կարևոր է, որ Հայաստանը, ի վերջո, ստեղծի կարիքավոր մարդուն

[17] Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտ զարգացման 2020-2015-թթ. ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, , (2020թ.), Երևան, https://www.e-draft.am/projects/2581/about:

հայտնաբերելու, հասնելու և աջակցելու մեխանիզմներ՝ թիրախ ընտրելով մարդուն, այլ ոչ թե միջնորդ ինստիտուտը:

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում փորձագետները նշում են երեք տարբերակ, որոնք պետությունը կարող է կիրառել կարիքի գնահատման, նույնականացման և աջակցության տրամադրման համար:

- Կենտրոնացված տարբերակ, որի դեպքում պետության կողմից վարվող տարատեսակ տվյալների բազաների համադրումից հնարավոր կլինի ստանալ անհատների եկամուտների առկայությունը կամ բացակայությունը:
- Ապակենտրոն տարբերակ, որի դեպքում նույնականացումը և կարիքների բացահայտումը տեղի կունենա համայնքային մակարդակում սոցիալական աշխատողների կողմից դեպքերի վարման միջոցով և ՏԻՄ-երի հետ համագործակցության արդյունքում:
- Խառը տարբերակը, որի դեպքում կարիքների վերհանումը տեղի կունենա համայնքներում, սակայն կենտրոնական մակարդակում գնահատումը կլինի միասնական համակարգված ձևով և ծառայությունների միասնականացման համար:

Աշխատանքային վեճերի լուծում

Անդրադառնալով ոչ ֆորմալ զբաղվածության դաշտում աշխատանքային վեճերը լուծելու, աշխատանքային իրավունքները պաշտպանելու, աշխատողներին բուլինգից, խտրականությունից և շահագործումից պաշտպանելու համար նախատեսված իրավական կարգավորումների թեմային՝ անհրաժեշտ է նշել, որ չգրանցված աշխատանքի պայմաններում բարդանում է աշխատանքային իրավունքի պաշտպանությունը, բայց դա անհնարին չէ, որովհետև պայմանագրից զատ կան այլ միջոցներ՝ ապացուցելու, որ անձինք ներգրավված են եղել աշխատանքային հարաբերություններում: Կա Սահմանադրական դատարանի որոշումը,[18] որում նշվում է, որ եթե աշխատողը գրանցված չէ, բայց գրավոր այլ ապացուցներով հաստատվում է աշխատանքային հարաբերությունների առկայությունը, նա օգտվում է բոլոր իրավունքներից: Բացի այդ՝ խտրականության ապացուցման գործիքակազմը Հայաստանում շատ սահմանափակ վիճակում է: Այսինքն՝ աշխատողի համար բարդ է խտրականացված լինելն ապացուցելը, քանի դեռ չկա առանձին օրենք, որը նաև կմանրամասնի դատարանի կողմից քննության պահանջները, ապացուցման բեռի դատավարական հարցերը:

Փորձագետները հարցազրույցներում նշել են, որ չգրանցված աշխատողների աշխատանքային իրավունքի պաշտպանության համար տեսչական մարմնի գործառույթները ներկայումս արդյունավետ չեն, քանի որ չգրանցված աշխատողների վերհանման խնդիրը բացառապես հարկային մարմնի գործառույթների տարածքում է (որպես հարկային պարտականություններից խուսափելու հիմք), իսկ աշխատանքի պաշտպանվածության տեսանկյունից հարցը չի դիտվում: Սակայն տեսչական մարմինը լավ ռեսուրս է. եթե վերոնշյալ խնդիրը լուծելու համար քաղաքական կամք լինի, այդ մարմինը կարող է արդունավետ լինել, եթե ոչ թե պատժիչ միջոցառումներ սահմանի գործատուների համար, այլ փորձի լուծման

[18] Հանուն Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի Որոշումը, 18 հուլիսի 2012թ. ՍԴՈ – 1038, http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1038.pdf:

առավել քիչ առճակատվող տարբերակներ գտնել: Փորձագետները նաև խորհուրդ են տալիս ունենալ մասնագիտացված աշխատանքային օմբուդսմենի ուժեղ ինստիտուտ: Այն կարող է լինել ոչ պետական կառույց, որը կզբաղվի աշխատողների շահերի պաշտպանությամբ և հնարավորություն կունենա զբաղվելու արտադատական կարգով վեճեր լուծելով:

Աշխատողների գրանցո՞ւմ, թե՞ ոչ

Մարդիկ միգուցե գրանցված չեն, հարկեր չեն վճարում, բայց այն եկամուտը, որ իրենք աշխատում են, ծախսում են, առևտուր են անում, տարբեր կրթական, առողջապահական և այլ ծառայություններից են օգտվում և այլն: Ուստի նրանց ունեցած չգրանցված եկամուտը վերադառնում է տնտեսություն այլ ձևով, օրինակ՝ ապրանքների գնման դեպքում ԱԱՀ և այլն: Այսինքն՝ մասնակցում են տնտեսական կյանքին և իրենց անտեսելն ու դուրս թողնելն այն հիմնավորումով, թե նրանք հարկեր չեն վճարում ու իրենք են մեղավոր, որ գրանցված չեն, խնդրահարույց է: Իհարկե, գործատուն ավելի շատ լծակներ ունի և եթե աշխատանքի հավակնորդը գրանցվելու պահանջներ ներկայացնի, գործատուն աշխատանքի կընդունի մեկ այլ հավակնորդի: Այստեղ կարևորվում է աշխատանքի շուկայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինների դերը, ինչը չկա կամ շատ թույլ է:

Փորձագիտական համայնքի հետ քննարկելով, թե ինչպիսի տարբերակներ կարող են առաջարկվել ժամանակի ընթացքում ոչ ֆորմալ շուկայից դեպի ֆորմալ անցնելու համար, այլ կերպ՝ չգրանցված աշխատողներին գրանցելու համար՝ պարզում ենք, որ փորձագետների մոտեցումները շատ տարբեր են: Մի մասը նշում է, որ ոչ ֆորմալից ֆորմալ տեղափոխման գործընթացը պետք լինի գործատուների խնդիրը, այլ ոչ թե աշխատողների: Գործատուների համար պետք է խրախուսվող մեխանիզմներ մշակվեն, օրինակ՝ հարկային բեռի թեթևացում, անկանխիկ տնտեսության ձևավորում և այլն: Սակայն անցումը կարող է լինել նաև աշխատողների համար խթանային միջավայրի ստեղծումով և որոշակի հարկային արտոնություններով, որի արդյունքում տեղի կունենա նրանց կամավոր գրանցումը: Փորձագետների երրորդ խումբը գտնում է, որ պետք է բացառել աշխատատեղերի պարտադիր-կամավոր գրանցման ճանապարհը, քանի որ սա կբերի աշխատատեղերի զգալի կրճատման: Գուցե այս կանոնից պետք է լինեն բացառություններ, հատկապես խոշոր տնտեսվարողների համար: Օրինակ՝ փոքր կրպակին չպարտադրվի, բայց մեծ արտադրություններին այո՝ սահմանելով որոշակի սկզբունքներ՝ օրինակ ըստ ապրանքաշրջանառության շեմի և այլն:

Այստեղ կարևոր է նշել պետություն-բիզնես դիրքի և հարաբերության մասին և արձանագրել, որ քանի դեռ բիզնես շահը գերակայելու է անհատի աշխատանքային իրավունքների պաշտպանության և սոցիալական ապահովության հանդեպ, այս խնդրը լինելու է մշտական: Ուստի էական նշանակություն ունի պետություն-բիզնես դիրքավորման փոփոխությունը և հարաբերության տեսանկյունը, և թե որքանով է պետությունն իրապես շահագրգռված նվազեցնել ստվերը և զգալիորեն բարելավել բիզնեսի վերահսկման որակը, կիրառվող մեխանիզմներն ու գործիքները:

Չգրանցված աշխատողների մեծ մասն իրենց հարցազրույցներում հիմնականում ցանկություն են հայտնել գրանցվելու՝ նախ և առաջ աշխատանքային ստաժ ձեռք բերելու և հետագայում աշխատանքային թոշակից օգտվելու համար, սակայն նրանք նաև նշել են, որ կան իրավիճակներ, երբ գործատուն չի ցանկանում գրանցել աշխատողին, իսկ չգրանցված աշխատողները զրկված են որոշում կայացնելու հնարավորությունից: Եղել են նաև չգրանցված նպաստառու աշխատողներ, որոնք նշել են, որ գրանցման պարագային կզրկվեն նպաստից՝ բացատրելով, որ նպաստը կայուն եկամուտ է, իսկ աշխատանքը՝ անկայուն, հետևաբար ընտրությունը կատարել են հօգուտ քիչ, բայց կայուն եկամուտի: Կայուն եկամուտը ևս նշվել է որպես գրանցման նախապայման: Այնուամենայնիվ՝ այս խմբի մոտ համընդհանուր է այն դիրքորոշումը, որ Հայաստանում թե՛ չգրանցված, թե՛ գրանցված աշխատողները վատ են ապրում և գրանցման փաստը սոցիալական բարելավման նախապայման չեն դիտարկում:

7. Չգրանցված աշխատողների ինքնակազմակերպման մարտահրավերն ու հնարավոր ազդեցությունը նրանց հիմնախնդիրների լուծման վրա

Ձայնը, ճանաչվածությունը և ներկայացուցչականությունն անբաժանելիորեն կապված են ոչ ֆորմալ աշխատողների իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման հետ: Կազմակերպման միջոցով է, որ ոչ ֆորմալ աշխատողները կարող են դիմակայել տնտեսական և սոցիալական ուժերին, որոնք հանգեցնում են նրանց մարգինալացման, շահագործման և կենսապահովման կորստին: Սակայն անհրաժեշտ է հստակեցնել, թե Հայաստանում ոչ ֆորմալ աշխատողների շրջանում ինչպիսին կարող է լինել քաղաքական կազմակերպման բնույթը, ովքեր են այդ մարդիկ, որքանով են հասկանում կամ ներգրավված քաղաքական գործընթացներում և, ի վերջո, արդյո՞ք ի վիճակի են առաջադիմական հասարակական կազմակերպված ուժ ձևավորել:

Քննարկելով ոչ ֆորմալ աշխատողների միավորման հնարավորությունը և այն, թե արդյոք դա կարող է որոշակի խմբերի համար խնդիրների լուծման միջոց դառնալ՝ լրացնել իրավաբանական հիմքերը՝ փորձագիտական հարցազրույցները հուշում են, որ Հայաստանի համար ժամանակավրեպ է չգրանցված աշխատողների միավորումների ստեղծումը: Նախ, որովհետև ՀՀ օրենսդրությունում հիշատակված են միմիայն գրանցված աշխատողների արհմիությունները և գործող իրավակարգավորումներն արգելք են դնում ոչ ֆորմալ աշխատողների միավորումների համար: Իհարկե, անպայման չէ ֆորմալ արհմիություն ունենալ: Փորձագետները ճիշտ են նշում, որ դա ինստիտուցիոնալիզացված հարաբերությունների համար է և դրանց փոխարենը միություններ և նախաձեռնություններ են բացվում ամբողջ աշխարհով: Բացի այդ՝ Հայաստանում գործադուլի ինստիտուտը (որպես շահերի պաշտպանության ամենակենտրոնական գործողություն) որպես այդպիսին կարգավորված չէ նույնիսկ գրանցվածների միջավայրում, ուրեմն այն հաստատ չի գործի չգրանցվածների դեպքում: Գրանցված աշխատողների արհմիությունների պրակտիկան Հայաստանում շատ թույլ է. արհմիություններն ուժեղացնելու, գրանցված աշխատողների

իրավունքների պաշտպանության, արհմիությունների ստեղծման, մասնագիտական համայնքների պաշտպանության խնդիր պետք է դրվի:

Կան մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնք զբաղվում են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում գտնվող անձանց իրավունքների պաշտպանությամբ և առաջխաղացմամբ: Այս կազմակերպությունների ջանքերով է, որ ընդունվել են ԱՄԿ 189 և 177 կոնվենցիաները: Այս կազմակերպությունները, պաշտպանելով ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում աշխատողների իրավունքները, հանրայնացնում են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտի ազդեցությունն ընդհանուր տնտեսության զարգացման և դրա մարտահրավերիների վրա, լսելի են դարձնում ոչ ֆորմալ ոլորտի ձայնը և նրանց կարիքները քաղաքականությունների մշակման ընթացքում, ապահովում են նրանց ներկայությունը և մասնակցությունը՝ իբրև լեգիտիմ տնտեսական սուբյեկտների, որոնք մասնակցություն ունեն տնտեսության զարգացման մեջ և լեգիտիմ շահառու են տնտեսական և սոցիալական ծրագրերի, հետազոտողների համար, տեսանելի են դարձնում դաշտը հետազոտությունների և փաստագրական տվյալների առումով, աջակցում են կազմակերպություններին, դրանց կազմակեպչական ձևերի կայացմանը և այլն:[19]

Ստորև ներկայացվում են մի քանի կազմակերպություններ և նրանց գործունեությունը, որոնք միգուցե օգտակար կլինեն Հայաստանի համար փորձի ծանոթացման տեսանկյունից:

«Կանայք ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում, գլոբալիզացնելով և կազմակերպելով». գործում է, որպեսզի վերանայվի աշխատանքի դասակարգման միջազգային ստատուսը՝ International Classification of Status in Employment (ICSE), որ այն հնարավորություն տա տեղական պետական վիճակագրական կոմիտեներին հավաքել առավել լավ վիճակագրություն ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտի մասին, ստեղծում է դաշտի հետազոտական գիտելիք (հարկումը և ոչ ֆորմալ տնտեսությունը, սահմանափումների տեսակները ոչ ֆորմալ ոլորտում զբաղվածության մասին, կարգավորման ազդեցությունը, ոչ ֆորմալ աշխատանքի գինը), տրամադրում է հարթակներ ոչ ֆորմալ աշխատողների, նրանց ներկայացնող կազմակերպությունների և տեղական ու կենտրոնական իշխանության ներկայացուցիչների համար՝ հասնելու բանակցված համայաձանագրերի կնքման, աջակցում է, որ ոչ ֆորմալ ոլորտում աշխատողների կողմից ստեղծված կամ նրանց անդամակցության վրա հիմնված կազմակերպությունները կարողանան արդյունավետ կերպով վարչական պատասխանատվության ենթարկել տեղական իշխանությունների որոշումները, որոնք բացասական են անդրադառնում նրանց կյանքի վրա:

«Սթրիթ նեթ, բացօթյա առևտրականների միջազգային ալյանսը» բացօթյա առևտրով զբաղվող չգրանցված առևտրականների պաշտպանության միջազգային ալյանս է: Կազմակերպությունն ունի անդամակցության մեխանիզմ (միավորումներ, կոոպերատիվներ), որոնք էլ կազմակերպում են աշխատանքը: Կազմակերպության նպատակն է բացօթյա առևորով զբաղվող առևտրականների խնդիրներով զբաղվելը, քաղաքականության մշակմանը

[19] Defining and Categorizing organizations of Informal Workers in Developing and Developed Countries, Women in Informal Employment Globalizing and Organizing, (September, 2013), https://www.wiego.org/sites/default/files/publications/files/Carre-Informal-Worker-Organizations-WIEGO-OB8.pdf.

մասնակցելն ու այն քննարկելը, պետություններին ռազմավարական և իրավական առաջարկություններ ներկայացնելը: Նպատակն է բարելավել կյանքը և հասնել այն բանին, որ պետությունը սոցիալական աջակցության տարբեր ծրագրերում ներառի նրանց: Աշխատանքը կազմակերպվում է կոլեկտիվ բանակցությունների, լոբինգի, ադվոկացիայի միջոցով, որպեսզի կառավարությունը ճանաչի և տրամադրի ծառայություններ՝ վարկ, առողջապահական ապահովագրություն: Փորձում է աջակցել ոչ ֆորմալ զբաղվածներին՝ դուրս գալու աղքատությունից և լուսանցքից և քայլելու դեպի ազատություն, վերահսկելու սեփական կյանքը:

«Տեղական աշխատողների միջազգային ֆեդերացիան» անդամակցության վրա հիմնված միջազգային կազմակերպություն է, որը հավատում է, որ բոլոր աշխատողները պետք է ունենան հավասար իրավունքներ: Նպատակն է կառուցել ուժեղ, ժողովրդավար և միացյալ կազմակերպություն, ամենուր ադվոկացիա անել տեղացի աշխատողների հավասար իրավունքների հարցը: 2020 թվականի մայիսի դրությամբ 74 մասնաճյուղ ունի 57 երկրում, կազմակերպությանն անդամակցում է 560,000 մարդ: Սկզբնական հիմնական առաքելությունն է եղել տեղական աշխատողներին ԱՄԿ C189-ն ընդունելու համար մոբիլիզացնելը. կոնվենցիան ընդունվեց 2011 թվականին:

8. Չգրանցված աշխատողների հանդեպ պետական քաղաքականության անբավարարության հիմնախնդիրների բացասական հետևանքները Քովիդ-19-ի օրինակով

Քովիդ-19-ով պայմանավորված ճգնաժամը ի ցույց դրեց տեղական և գլոբալ մակարդակներում գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգային խնդիրները: Այն առավել ընդգծեց խնամքի տնտեսության (care econocmy) կարևորությունը, բացահայտեց սոցիալական ապահովագրական համակարգերի խոր ճգնաժամը (միգուցե նաև քանի որ համակարգերը բավարար միջոցներ չունեն իրենց պարտավորությունները լիարժեք կատարելու համար) և ավելի խորացրեց պետական ինստիտուտների նկատմամբ արդեն գոյություն ունեցող անվստահությունը: Ակնհայտ է, որ լավ սոցիալական պաշտպանության համակարգ ունեցող երկրները կարողանում են ավելի արդյունավետ աշխատել համավարակով պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ:

2019-ի վերջից աշխարհում Քովիդ-19-ի ի հայտ գալու և կարճ ժամանակում համավարակի պատճառ դառնալու հետևանքով Հայաստանում, ինչպես նաև այլ երկրներում, պետությունները մի շարք հրատապ միջոցառումներ ձեռնարկեցին համաճարակի առաջացրած բացասական սոցիալ-տնտեսական իրավիճակը մեղմելու համար: Հայաստանի կառավարությունը Քովիդ-19-ի ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական հետևանքների

չեզոքացման նպատակով ընդունեց մի շարք ծրագրեր: Ծրագրերի մեխանիզմները, սակայն, ամբողջությամբ չեն ընդգրկում Քովիդ-19-ի հետևանքով տուժած բոլոր խմբերին:

Հետազոտության ընթացքում ոչ ֆորմալ զբաղվածների հետ իրականացված հարցազրույցները ցույց են տալիս, որ սոցիալ-տնտեսական իրավիճակի ազդեցությունը հատկապես մեծ սպառնալիք է ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում գտնվող անձանց համար, քանի որ նրանք հիմնականում դուրս են մնում օրենքի կարգավորման շրջանակներից և հնարավորություն չեն ունենում ստանալու համապատասխան իրավական, սոցիալական և տնտեսական աջակցություն: Ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում ներգրավված մարդիկ, հիմնականում լինելով անմրցունակ մասնագիտական համայնքից, ներկա իրավիճակում ստիպված են եղել դադարեցնել աշխատանքը կամ անցնել հարկադիր արձակուրդի, կամ չեն ազատվել աշխատանքից, բայց աշխատավարձ չեն ստացել, քանի որ չեն աշխատել: Սրա հետևանքով անհնարին է դարձել սննդի և անհրաժեշտ դեղորայքի նվազգայուն պահանջների ապահովումը, վարձով բնակվողները չեն կարողացնել վճարել տան և այլ վարձակալությունների գումարները, անտուն մնալու վտանգը աճել է, աճել է նաև մարդկանց սոցիալական մեկուսացումը, ինչը ևս աջակցության հնարավոր համայնքներից և օղակներից դուրս մնալու մեծ սպառնալիք է, և այլն:

Այս պահի դրությամբ ՀՀ Կառավարությունը իրականացրել է 22 միջոցառում: Առաջարկված միջոցառումներից ոչ մեկն աջակցության նպատակով չի թիրախավորում ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում գտնվող անձանց: Պատճառն, իհարկե, այն է, որ ՀՀ-ն չի ճանաչում ոչ ֆորմալ զբաղվածությունն իբրև աշխատանք, քանի որ այն գրանցված չէ և չի հարկվում: Այնուամենայնիվ՝ առաջարկված որոշ միջոցառումներ, որոնք վերաբերում են ընդհանուր բնակչությանը, կարող էին նաև վերաբերել ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող անձանց խմբին: Մասնավորապես՝ կոմունալ ծախսերի փոխհատուցում, երեխային ուղղված աջակցություն, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն, ինչպես նաև ժամանավոր աշխատանքի առաջարկում:

Քովիդ-19-ի շրջանակներում մշակված պետական միջոցառումների ընդհանուր արդյունավետության մասին խոսելիս փորձագիտական կարծիքը բաժանվում է երկու մասի: Փորձագետների մի մասը կարծում է, որ աջակցության չափը եղել է աննշան և որ այն առանձնապես ազեդցություն չի ունեցել ստացողների կյանքի որակի փոփոխության վրա: Մյուս մասն էլ կարծում է, որ կառավարությունն արել է առավելագույնը, քանի որ լայնամասշտաբ աջակցություն կարող է իրեն թույլ տալ միայն զարգացած տնտեսություն ունեցող պետությունը:

Իսկ չգրանցված աշխատողների մասով փորձագետները ոչ բավարար են գնահատել բոլոր ծրագրերի հասցեականությունը: Կառավարությունը օգնություն է տրամադրել առաջին հերթին նրանց, ում կարիքներն ավելի քիչ են կամ նրանց, ում կարիքներն ավելի հեշտ է նույնականացնել, ինչը ևս մեկ շերտ է ավելացնում արդեն գոյություն ունեցող անհավասարությանը: Օրինակ՝ օժանդակությունից զրկվել են այն մանր ու միջին ձեռնարկությունները, որոնք համավարակի հետևանքով սառեցրել են իրենց գործունեությունը, որպեսզի կրճատեն հարկերը ու դրա հաշվին կարողանան գոյատևել. դրանք նաև չեն կարողացել աշխատավարձ վճարել իրենց աշխատողներին, զրկվել են պետական օժանդակությունից, որը կարող էր ուղղվել աշխատողների՝ չվարձատրված ժամանակահատվածի ֆինանսական փոխհատուցմանը:

Բայց այն հաստատությունները, որոնք ի վիճակի են եղել աշխատել ու հարկեր վճարել, ստացել են պետական օժանդակություն: Փաստացի օժանդակություն են ստացել այն հաստատությունների աշխատողները, որ ավելի մրցունակ են, իսկ թույլ մրցունակների աշխատողները զրկվել են օժանդակությունից: Այս կոնտեքստում չգրանցված աշխատողներն ընդհանրապես անտեսված վիճակում են հայտնվել, քանի որ դուրս են հարկային դաշտից: Այսինքն՝ մարդը կարող է դուրս լինել հարկային դաշտից ու սովի մատնվել, իսկ մյուսը, ով հարկային դաշտում է ու այս կամ այն չափով աշխատավարձ է ստանում, ստանում է նաև պետական աջակցություն:

Աջակցության տրամադրման կենտրոնացված համակարգը նշվում է որպես հիմնական խնդիր: Գնահատման գործիքը կարող էր ստեղծվել վերևից, սակայն գնահատումը պետք է կատարվեր համայնքահեն մոտեցումով: Նշվել է նաև, որ տեխնիկապես դժվար է եղել միայն առցանց աշխատելը և անհրաժեշտ էր այլ օղակներ ևս ներգրավել, որոնք համայնքներում կարող էին առավել արդունավետ աշխատանք տանել: Այսինքն՝ տեխնոլոգիաները միգուցե արդյունավետ են, բայց մարդիկ դեռ չունեն բավարար հմտություններ և հնարավորություններ և ըստ այդմ պատրաստ չեն դրանով հարաբերվելու պետության հետ:

Փորձագետներն առաջարկում են Քովիդ-19-ով պայմանավորված պետական աջակցության հետևյալ սկզբունքները՝

- ռեսուրսների անհավասարաչափ բաշխում՝ հասարակության մեջ աջակցությունը բալանսավորելու անհրաժեշտությամբ պամանավորված,
- սոցիալական աշխատողի ինստիտուտի իրական կայացում և ապակենտրոն եղանակով աշխատանքի կազմակերպում,
- ըստ բնակության վայրի՝ գյուղ, քաղաք, ինչպես նաև ըստ աշխարհագրության տարբերակված մոտեցման ցուցաբերում, որովհետև գյուղական ոչ ֆորմալ զբաղվածությունն այլ զբաղվածություն է,
- չափահասների (կանխիկ, արտոնություններ) և անչափահասների համար (ծառայություններ) սոցիալական աջակցության տարբերակում:

Շատ երկրներ դժվարություն ունեն չգրանցված աշխատողներին նույնականացնելու և ըստ այդմ համապատասխան աջակցություն տրամադրելու հարցում, քանի որ այս խումբը կազմում է հասարակության անտեսանելի հատվածը և դուրս է պետական ցանկացած տվյալների բազաներից կամ գրանցամատյաններից: Սյուրս Աֆշարը,[20] որը ներկայացնում է WIEGO-ն, նկատում է, որ ներկայումս ամբողջ աշխարհում Քովիդ-19-ի ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ պետությունների կողմից աջակցություն տրամադրելու նպատակով կիրառվում են երեք մոդելներ՝

1) համընդհանուր աջակցություն բոլոր բնակիչներին՝ անկախ նրանց որևէ կարգավիճակից կամ եկամուտներից, հիմնականում մեկ ֆիքսված գումարով,

[20] Roever, S., Alfers, L., Wanjiku, C., Rogan K. & M., with Agshar, C. and Mhalana, S., (2019) Workers' Rights in Informal Economies.

2) սոցիալական ապահովագրության ծրագեր, որոնցում մասնակցում են և՛ գործատուն, և՛ աշխատողը, և՛ պետությունը: Այստեղ աջակցությունն ուղիղ կապված է աշխատանքային իրավահարաբերությունների հետ,

3) պետական բյուջեից ֆինանսավորվող և անհատական կարիքի վրա հիմնված ծրագրեր: Սրանք թիրախավորված ծրագրեր են նրանց համար, ում եկամուտը փոքր է սպառողական զամբյուղից և/կամ գտնվում են ռիսկային խմբերի ու թիրախների գոտում:

Բոլոր մոդելներն էլ շրջանցում են չգրանցված աշխատողներին, և նրանք, այսպիսով, դուրս են մնում սոցիալական աջակցության ծրագրերից, նրանք հիմնականում ծայրահեղ աղքատ չեն, նրանք եկամուտ ունեն, բայց նրանք գործատու չունեն, ով սոցիալական վճարը կվճարեր պետությանը կամ կհարկեր աշխատանքը***: Չգրանցված աշխատողներն, այսպիսով, մնում են սոցիալական ծրագրերի միջև գտնվող դատարկ տարածություններում***: Առաջարկվող լուծումներից մեկն այն է, որ չգրանցված աշխատողների սոցիալական աջակցությունն ուղղվի միջին և փոքր բիզնեսներին, որովհետ հենց այս դաշտում էլ հիմնականում գտնվում են նրանք: Կառավարությունները մտածում են փոքր ու միջին բիզնեսին աջակցելու ֆինանսական գործիքների մասին:

9. Քովիդ-19-ից տուժած ընտանիքներին օգնության ցուցաբերման՝ ՀԿ-ների և քաղաքացիական նախաձեռնությունների փորձը

Հետազոտության ընթացքում նաև հարցազրույցներ իրականացվեցին Հայաստանի մի շարք համայնքներում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ծանոթանալու նաև համայնքներում կարիքների վերհանման և աջակցության տրամադրման նրանց փորձառությանը համավարակի ընթացքում:

Մարդիկ համայնքային ՀԿ-ներին հիմնականում դիմել են սոցիալական և տնտեսական հարցերով, մասնավորապես՝ աշխատավարձի չվճարման, աշխատանքից զրկվելու հարցերով, ընտանեկան բռնությունից պաշտպանվելու և սննդի հայթայթման համար: ՀԿ-ները միշտ չէ, որ կարողացել են այդ հարցերին լուծում տալ և մարդկանց ուղղորդել են այլ մասնագիտակցված կառույցներ, ՄԻՊ կամ պետական կառույցներ: Երբեմն փաստաբանի աջակցության կարիք է եղել, որ մարդիկ կարողանան վերականգնվել աշխատանքում:

Մարտ և ապրիլ ամիսներին մարդիկ շատ են դիմել՝ խնդրելով ՀԿ-ներին աջակցել հասկանալու Քովիդ-19-ի պետական աջակցության ծրագրերը, և որպեսզի այնուհետև կարողանան դիմել դրանց: ՀԿ ներկայացուցիչները նշում են, որ շատերի համար դժվար է եղել -առցանց դիմում լրացնելը, քանի որ շատերը չունեն համապատասխան սարքավորումներ կամ հմտություններ առցանց ծառայություններից օգտվելու համար: Հաճախ ՀԿ-ներն են լրացրել մարդկանց փոխարեն այդ դիմում-հայտերը:

Հատկանշական է, որ ՀԿ ներկայացուցիչները պարզել են, որ շատ դեպքերում աշխատողներն ունեցել են պայմանագրեր գործատուի հետ, սակայն դրանք կեղծ պայմանագրեր են եղել, և մարդիկ պետական համակարգում գրանցված չեն եղել: Այս երևույթը թույլ չի տվել, որ մարդիկ օգտվեն առաջարկվող պետական միջոցառումներից: ՀԿ-ներն իրավաբանական ու տեխնիկական խորհրդատվություն են ներկայացրել այն մասին, թե մարդիկ ինչպես դիմեն այդ ծրագրերին: Գերակշռել են 9-րդ ծրագրի վերաբերյալ հարցերը:[21]

Ապատեղտակտվությունը հասել է համայնքներ, և որոշ ՀԿ ներկայացուցիչներ նշում են, որ ստիպված են եղել իրականացնել չնախատեսված տեղական քարոզարշավներ՝ համայնքերին ապացուցելու, որ վիրուսն իրական է, որ դրանից պաշտպանվելու կարիք կա:

Մարդկանց ու նրանց կարիքները ՀԿ-ները բացահայտել ու նույնականացրել են մի քանի եղանակներով՝

- համագործակցելով սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների, մարզպետարանների, համայնքապետարանների և ՏԻՄ-երի հետ՝ համադրվել են համայնքի աղքատության տարբեր ցուցակներ: Եղել են գյուղապետներ, որոնք չեն համագործացել, և այդ պարագայում համագործակցությունը եղել է համայնքի դպրոցի տնօրենի հետ,
- ստեղծվել են արագ արձագանքման հարթակներ կոնկրետ հարցերի շուրջ, և շահառուներն իրազեկվել են դրանց մասին առցանց և դռնեդուռ արշավի միջոցով,
- աշխատել է թեժ գիծ,
- եղել են ուղղորդումներ պետության կողմից կամ արդեն նախկին շահառուների կողմից,
- մշակվել են ուղեցույցներ և բաժանվել մարդկանց թեժ գծի համարով, որը թույլ է տվել կարիքավորներին զանգել կազմակերպության անվճար համարին:

ՀԿ-ները վստահեցնում են, որ այն մարդիկ, որոնք խոցելի էին նախկինում, կրկին մնացին խոցելի, ու եթե օրավարձով աշխատող էին, դարձան է՛լ ավելի խոցելի: Մարզերից մեկում հասարակական կազմակերպություններից մեկի շահառու 1700 ընտանիքից 60%-ը չգրանցված աշխատող ունեցող ընտանիքներ էին: Նրանք աշխատում էին որպես մաքրուհիներ, անասնապահական ֆերմաներում աշխատողներ, տաքսու վարորդներ, արտերկրում աշխատողներ, դերձակներ և այլն, այսինքն՝ օրավարձով աշխատողներ էին:

Եզդիական համայնքի ներկայացուցչի հետ զրուցի ընթացքում վերջինս նշեց, որ այն համայնքներում, որտեղ բնակվել և աշատել են ազգությամբ հայեր և եզդիներ, հայ գործատուն նախ կրճատել է եզդիներին, և հետո միայն հայերին՝ եթե եղել է դրա անհրաժեշտությունը: Սա խտրականության դրսևորում է: Եզդի աղջիկները, որոնք կրթություն ստանալու խնդիր ունեն, կամ եզդի երեխաները, որոնք իրենց մայրենի լեզուն սովորում էին տարատեսակ խմբակներ

[21] Աջակցության 9-րդ միջոցառման շահառուներ են հանդիսանում մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքները, որտեղ երեխայի ծնողներից/խնամակալներից ոչ մեկը կամ միայնակ ծնողը/խնամակալը չի ունեցել գրանցված աշխատանք 2020թ. մարտի 12-ի դրությամբ, և չի ընդունվել ժամանակավոր կամ մշտական աշխատանքի մարտի 12-31-ն ընկած ժամանակահատվածում:

այցելելով, հիմա, փաստորեն, զրկվել են դրանից, քանի որ համապատասխան առցանց դասընթացներ չկան:

Նույնասեռական անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ ներկայացուցիչը նշում է, որ նույնասեռական անձինք ևս լուրջ զրկանքներ են կրել համավարակով պայմանավորված: Շատ նույնասեռական անձինք, որոնք ստիպված լքել են ընտանիքը, քանի որ ընտանիքը մերժել է նրանց սեռական կողմնորոշումը, բնակվում են վարձով՝ միայնակ կամ ընկերների հետ, կան մարդիկ, որոնք մարզերից Երևան են տեղափոխվել աշխատանք գտնելու և ընտանիքից հեռու բնակվելու նպատակով: Այս խումբը ունի աշխատանք գտնելու խնդիր, բնակարանի խնդիր, սննդի ու հագուստի խնդիր: Հասարակության խտրական վերաբերմունքի և ատելության արդյունքում նույնասեռական անձնինք նաև խնդիր ունեն պատշաճ բժշկական աջակցություն ստանալու: Համավարակի ընթացքում այդ խնդիրները կրկնապատկվել են, քանի որ գործատուները ԼԳԲՏԻ+ անձանց աշխատանքի են ընդունել առանց պայմանագրի, որոնք հիմնականում աշխատում են ծառայությունների ոլորտում՝ լոքդաունի մեջ գտնված հիմնական ոլորտներից մեկը: Աշխատանքը կորցնելուց հետո նույնասեռական անձինք ևս լուրջ խնդիրներ են ունեցել՝ նախ և առաջ կապված բնակարանի վարձի և սննդի հետ:

ՀԿ ներկայացուցիչների հետ հացազրույցներից հատվածներ.

- *Փորձը ցույց է տալիս, որ լավագույն ձևն է համայնքներում ունենալ մարդիկ, որոնք քեզ չեն խաբում, տեղեկատվությունը կարողանում են ճշտել առնվազն երեք աղբյուրից: Երբ ծրագիրը նոր էինք սկսելու, փորձեցինք ցուցակներ հավաքել, օրինակ՝ Արագածոտնի մարզի մի խոշորացված համայնքից ցուցակ ուզեցինք 4 տարբեր հեղինակավոր անձանցից, 4 ցուցակներն իրարից տարբերվում էին, որովհետև իրենց բարեկամներին էին նշել: Բայց դու համեմատում ես քո ճշտած 4 տեղից, և եթե մի քանի ցուցակում նույն մարդու անունը կա, ուրեմն հավաստի է: Բացի այդ՝ երբ ճշտում էինք տվյալները, հիմքն էլ էինք ճշտում, այսինքն՝ թե ինչ հիմքով են փորձում օգնություն ակնկալել, հիմքերն էլ էինք բոլոր հնարավոր ձևերով ստուգում:*
- *Պետության կողմից համակարգման գործընթացի խնդիր կա, որը միջգերատեսչական ուղղորդման, հայտնաբերման, տեղավորման, դրա վճարման կարգի, այլընտրանքային ծառայությունների, ճգնաժամային իրավիճակում տեղավորման, ընտանիքի աջակցության, այդ ամեն ինչի վերաբերյալ է: Լուծումները համակարգային պետք է լինեն, դեպք վարողները, համայնքային սոցիալական աշխատողը, նրանց փոխհարաբերությունները կարգավորված պետք է լինեն:*
- *Նախ խնդիր էր, որ -առցանց հարթակում մարդկանց գրագիտության և հմտությունների հարցը կար: Դեպքեր ենք ունեցել, երբ նույն կարգավիճակի մարդիկ են եղել, դիմել են պետական աջակցության համար, մեկը ստացել է դրական պատասխան, մեկը՝ բացասական:*

Հասարակական կազմակերպություններից բացի հատկապես սոցցանցերում տեսանելի էին նաև Քովիդ-19-ից տուժած ընտանիքներին օժանդակություն ցուցաբերող քաղաքացիական (խմբային ու անհատական բնույթի) ինքնաբուխ նախաձեռնությունները:

Պետություն-քաղաքացիական հասարակություն կապն ու համագործակցությունը

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի 2019թ.-ին հրապարակած զեկույցը ներկայացնում է ՔՀԿ նպաստավոր միջավայրի՝ «ՔՀԿ չափիչ» մեթոդաբանությամբ իրականացված փորձնական ուսումնասիրության արդյունքները: Նշվում է, որ չկա պետություն–ՔՀԿ համագործակցությունը կարգավորող կամ խթանող հատուկ քաղաքականություն կամ ռազմավարություն, համագործակցությունը հիմնականում ձևավորվում է տարբեր իրավական ակտերի միջոցով սահմանված հանրային մասնակցության հնարավորությունների շուրջ, այդ թվում՝ հանրային խորհրդի և նախարարություններին ու այլ գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների ու ոլորտային աշխատանքային խմբերի միջոցով, որոնք, սակայն, ազդեցության առումով բավարար արդյունավետ չեն:

Այս չկարգավորված հարաբերությունը նաև ակնհայտ էր Քովիդ-19-ով պայմանավորված իրավիճակի ընթացքում: Թեև կար որոշակի համագործակցություն և ուղղորդումներ, սակայն դրանք համակարգված բնույթ չէին կրում, հատվածային էին և հիմնականում չծրագրված:

10. Եզրակացություններ

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ չգրանցված աշխատողների խմբերից խոցելի իրավիճակում են հայտնվել. ծառայությունների մատուցման և սպասարկման ոլորտում աշխատողները, հատկապես նրանք, որոնք կատարում են սեզոնային կարճաժամկետ և օրավարձով աշխատանք, այն անձինք, որոնք իրականացնում են մասնավոր անհատական ծառայություններ՝ մաքրուհիներ, դայակներ, բացօթյա առևտրով զբաղվողներ, որոնք իրականացնում են մասնավոր շինարարական աշխատանքներ, ինքնազբաղ, բայց չգրանցված աշխատող արվեստագետներ, անհատ ստեղծագործողներ, նկարիչներ, բրոկերական շուկա և արտագնա աշխատողներ:

Քովիդ-19-ի ազդեցությունն ամենաշատը դրսևորվել է այն չգրանցված սոցիալական խմբերի շրջանում, որոնք ի սկզբանե եղել են խոցելի: Իսկ ընդհանուր առմամբ հիմնական տուժած խմբերն են՝ կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, էթնիկ և սեռական փոքրամասնությունները: Ամենատուժածը բանակչության 45-55 տարեկան հատվածն է, որը պետական սոցիալական պաշտպանության երաշխիքների տեսանկյունից ամենազրկվածն է՝ որևէ տիպի աջակցություն չի ստանում, աշխատաշուկայից դուրս է մղված: Սրվել է իրավիճակը նաև ընտանիքում հաշմանդամություն ունեցող, հատկապես հաշմանդամ երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներում, էթնիկ և սեռական փոքրամասնությունների համայնքներում:

Քովիդ-19-ի հետևանքով սրված կարիքները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ սոցիալական, կրթական և առողջապահական: Սոցիալական կարիքների մեջ են՝

բնակարանի վարձակալման հարցը, վարկերի տոկոսադրույքների վճարման բարդությունները, սննդի բավարարումը, երեխաների հագուստը և բնակարանի ջեռուցման խնդիրը գարնան առաջին ամիսներին: Առողջապահական կարիքներից սրվել են՝ քրոնիկ հիվանդների պլանային ստուգումները, դեղորայքի ձեռքբերման մատչելիությունը և ամենակարևորը՝ հոգեբանական աջակցության կարիքը: Կրթական կարիքների համար նշվել է համացանցի մատչելիության խնդիրը, համակարգիչների բացակայության հարցը, բնակարանային նեղվածքը, ինչպես նաև այլ վատ պայմանների պատճառով – առցանց դասերին մասնակցելու բարդությունները: Ի հայտ են եկել կամ սրվել են ընտանեկան բռնությունը, վախը, նյարդային լարումները:

Ակնհայտ է, որ Հայաստանում սոցիալական աջակցության պետական քաղաքականությունը սևեռած չէ չգրանցված աշխատողների խնդրի վրա: Չկա սոցիալական աջակցության հատուկ բաղադրիչ, որը փնտրում և գտնում է մարդկանց չգրանցված աշխատանքի հիմքով, գնահատում կարիքը և տրամադրում անհատական աջակցություն: Այլ կերպ ասած՝ սոցիալական աջակցության ծրագրերը բավարար մարդակենտրոն չեն: Դրանք չեն փնտրում մարդկանց, փոխարենը փնտրում կամ ստեղծում են միջնորդ կառույցներ, որոնց միջոցով փորձ է արվում այդ աջակցությունը հասցնել մարդուն: Սակայն արդյունքում ստացվում է, որ ռեսուրսներն ավելի շատ միջնորդ կառույցի վրա են ծախսվում, քան իրական մարդկանց: Կարևոր է, որ Հայաստանն, ի վերջո, ստեղծի կարիքավոր մարդուն հայտնաբերելու, հասնելու և աջակցելու մեխանիզմներ՝ թիրախ ընտրելով մարդուն, այլ ոչ թե միջնորդ ինստիտուտը:

Այդ մեխանիզմների բացակայությունն է պատճառը, որ այս պահի դրությամբ Կառավարության առաջարկած միջոցառումներից ոչ մեկն աջակցության նպատակով չի թիրախավորում ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում գտնվող անձանց: Պատճառն, իհարկե, այն է, որ ՀՀ-ն չի ճանաչում ոչ ֆորմալ զբաղվածությունն իբրև աշխատանք, քանի որ այն գրանցված չէ և չի հարկվում: Այնուամենայնիվ՝ առաջարկված որոշ միջոցառումներ, որոնք վերաբերում են ընդհանուր բնակչությանը, կարող էին նաև վերաբերել ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող անձանց խմբին: Մասնավորապես՝ կոմունալ ծախսերի փոխհատուցում, երեխային ուղղված աջակցություն, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն, ինչպես նաև ժամանավոր աշխատանքի առաջարկում:

Հարցազրույցներին մասնակցած չգրանցված բոլոր աշխատողների մոտ զեղչվել են կոմունալ ծախսերը, սակայն միայն երկուսն են դիմել Քովիդ-19-ով պայմանավորված պետական միջոցառումների ծրագրին և ստացել են երեխաների համար նախատեսված գումարը: Հետազոտությանը մասնակցած չգրանցված աշխատողների մեծ մասը չի օգտվել այս ծրագրերից հետևյալ հիմնավորումներով՝ հիմնականում տեղյակ չեն եղել, դիմել են ու չեն ստացել, չեն վստահել, որ կստանան և ձեռնպահ են մնացել, հայտի միայն առցանց հասանելիությունը սահմանափակել է նրանց, քանի որ չեն ունեցել հմտություններ և համապատասխան միջոցներ՝ համակարգիչ և համացանց, իսկ հեռախոսից դժվար են օգտվում նման նպատակներով:

Համավարակի հետևանքով մարդիկ համայնքային ՀԿ-ներին հիմնականում դիմել են սոցիալական և տնտեսական հարցերով, մասնավորապես՝ աշխատավարձի չվճարման, աշխատանքից զրկվելու, ընտանեկան բռնության և սննդի հայթայթման: ՀԿ-ները միշտ չէ, որ կարողացել են այդ հարցերին լուծում տալ և ուղղորդել են այլ մասնագիտացված կառույցներ,

ՄԻՊ կամ պետական կառույցներ: Երբեմն փաստաբանի աջակցության կարիք է եղել, որ կարողանան վերականգնվել աշխատանքի: Այնուամենայնիվ՝ չի եղել պետություն–ՔՀԿ համագործակցությունը կարգավորող կամ խթանող հատուկ քաղաքականություն կամ ռազմավարություն: Թեև կային որոշակի համագործակցություն և ուղղորդումներ, սակայն դրանք համակարգված բնույթ չէին կրում, հատվածային էին և հիմնականում չծրագրված:

Առաջարկներ.

- Ստեղծել կարիքավոր մարդուն հայտնաբերելու, հասնելու և աջակցելու մեխանիզմներ՝ թիրախ ընտրելով մարդուն, այլ ոչ թե միջնորդ ինստիտուտը:
- Հստակեցնել այն մեխանիզմները, որոնք կարելի է կիրառել կարիքավոր և օժանդակության առաջնային անհրաժեշտություն ունեցող չգրանցված աշխատողներին հայտնաբերելու համար:
- Մշակել չափորոշիչներ, որոնք թույլ կտան նույնականացնել այն չգրանցված աշխատողներին, ովքեր Քովիդ 19-ի հետևանքում հայտնվել են սոցիալական, կրթական, առողջապահական և այլ բնույթի զրկանքների մեջ և ունեն պետական աջակցության անհրաժեշտություն:
- Ստեշծել կարիքների հասցեագրման միասնական համակարգ միջգերատեսչական, ինչպես նաև տեղական ու հանրապետական մակարդակներում:
- Բաշխել ռեսուրսները անհավասարաչափ՝ հասարակության մեջ աջակցությունը բալանսավորելու անհրաժեշտությամբ պամանավորված:
- Կայացնել սոցիալական աշխատողի ինստիտուտը և կազմակերպել սոցիալական աջակցության աշխատանքը ապակենտրոն եղանակով:
- Ընդլայնել աշխատանքի և առողջապահության տեսչական մարմնի գործառույթները և ապահովել վերահսկողության անհրաժեշտ որակ: Աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողական մեխանիզմը հաջորդ տարի կփոխանցվի տեսչությանը, սակայն երաշխիքներ չկան, որ այս մարմինը ունի բավարար զգայունություն մի շարք հարցերի շուրջ և այլն:
- Ունենալ մասնագիտացված աշխատանքային օմբուդսմենի ուժեղ ինստիտուտ, որը կարող է լինել ոչ պետական կառույց, սակայն որը կզբաղվի աշխատողների շահերի պաշտպանությամբ և հնարավորություն կունենա զբաղվելու արտադատական կարգով վեճերի լուծմամբ:
- Քննարկել ոչ ֆորմալ շուկայից դեպի ֆորմալ անցնելու տարբերակները, գործիքները և մեխանիզմները տարբեր խմբերի ու ոլորտների համար տարբերակված մոտեցմամբ և այնպես, որ գրանցումը բխի երկու կողմերի շահերից:
- Ձևավորել մասնակցայնության մեխանիզմներ քաղաքականություններն ուսումնասիրող անկախ հետազոտական ինստիտուտների և փորձագիտական խմբերի համար, և ապահովել ինստիտուցիոնալ համագործակցության մեխանիզմներ պետության հետ:

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ: